



Փ Ա Ր Ո Մ *Paros*


ISSUE 82 MAY / ԹԻԻ 82 ՄԱՅԻՍ 2024

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

Թեմական Լուրեր


ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՉԵԿՈՅՑԸ (NCCA)

Ընդհանուր Քարտուղարուի Էլիզապեթ Սթոն առցանց դասախօսեց Չորեքշաբթի, 1 Մայիս 2024-ին ամենամսեայ լսարանական դասախօսութեանց ժամանակ: Տրուած ըլլալով որ ամսուան վերջին Չորեքշաբթին կը գուգադիպէր Ապրիլ 24-ին, բացառաբար դասախօսութիւնը յետաձգուեցաւ 1 Մայիսին:



Էլիզապեթ կամ Լիզ Սթոն, կաթողիկէ է և Ընդհանուր քարտուղարի պաշտօնի վրայ՝ 2018-ի Յունուարէն ի վեր: Լիզ անդրադարձաւ Աւստրալիոյ Եկեղեցիներու Ազգային խորհուրդի (NCCA) 30-ամեակին, երբ ան ձևաւորուեցաւ 1994-ին՝ յաջորդելու Աւստրալիոյ Եկեղեցիներու Խորհուրդին, հիմնուած 1948 թուականին Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին ձևաւորումէն անմիջապէս ետք: Հայ Առաքելական Եկեղեցին եղած է երկու խորհուրդներուն անդամ, իսկ 1994-1997 թուականներուն Ադան Արք. Պալիօզեան եղած է Ազգ Եկեղեցիներու Խորհուրդին առաջին նախագահը:

Ներկայիս կան 18 անդամ ազգային եկեղեցիներ: Լիզ տեղեկացուց որ Խորհուրդի հիմքը Յովհաննէս 17:20-23-ն է, ուր յիշուած է Յիսուսի աղօթքը իր աշակերտներուն համար: Քրիստոնէական միասնութիւնը երեք անգամ յիշուած է Յիսուսի աղօթքին մէջ: Ան նշեց, որ աղօթքը, ուր կը խնդրուի որ իր աշակերտները «քուրորդ մէկ ըլլան», ն՛ նուէր էր, և՛ առաջադրանք: Այսպիսով, երբ մենք կը խօսինք քրիստոնէական միասնութեան մասին, Յիսուսի աղօթքէն մենք կրնանք հաստատել, որ ան որպէս հիմք ունի կեանքը Քրիստոսի հետ համատեղ ապրիլը, որպէս աշխարհի վկայութեան հիմնական աղբիւր. իսկ այդ կ'արտայայտուի ընդհանուր սիրոյ, նպատակի և առաքելութեան միջոցով:



Նշուեցաւ, որ միասնութիւն չէր նշանակեր հակամարտութեան բացակայութիւն. միասնութիւնը միատեսակութիւն ալ չէր նշանակեր, որովհետեւ մեր եկեղեցիները բազմազանութեան մէջ միասնութիւն կը տեսնեն, փաստ՝ մեր եկեղեցիներու փոխյարաբերութիւնը: Միասնութիւն չի նշանակեր նաեւ միաձայնութիւն վարդապետութիւններու, խորհուրդներու, մշակոյթի և ասանդութիւններու միաձայնութիւն: Այնուհետև Լիզը մեզի փոխանցեց NCCA-ի հիմնական փաստաթուղթ մը, որ ընդունուած էր անդամ եկեղեցիներու կողմէ 20 տարի առաջ՝ 2004 թուականին: Այս փաստաթուղթը, որ կը կոչուի Աւստրալական եկեղեցիներու Միասնական Ուխտ, ցոյց կու տայ, թէ ինչպէ՛ս Աւստրալիոյ եկեղեցիները կրնան աճիլ միասին, ինչպէ՛ս աւելի տեսանելիօրէն կ'արտայայտեն միասնութեան ցանկութեան առկայութիւնը, որ կտակ է բոլորին Քրիստոսի կողմէ. թէ ինչպէ՛ս հնարաւոր է միասին աշխատիլ, ինչպէ՛ս կրնանք միասին ընդհանուր աղօթք կատարել, բարեխօսել և հոգ տանիլ իրարու, միասին ուսումնասիրել մեր քրիստոնէական համոզումները և հետեւիլ անոնց կիրառման, ուսումնասիրել ընդհանուր առաքելութեան և ծառայութեան հնարաւորութիւնները, ընդունիլ տարբեր եկեղեցիներու մէջ կատարուող մկրտութեան խորհուրդը: 2024-ի Յունիսին կայանալիք NCCA-ի 11-րդ ազգային ֆորումին ընդառաջ, երբ պիտի նշուի NCCA-ի 30-ամեակը անդամ եկեղեցիներուն հետ միասին, Լիզ անդրադարձաւ 2019-ի ռազմավարական Ճանապարհային քարտեզին, որը առաջնորդած է NCCA-ը վերջին շրջանին: Ճանապարհային այդ քարտեզը կը հանգչի չորս սիւներու վրայ.



2024 Յունիսին կայանալիք Ազգային ֆորումը պիտի քննարկէ, թէ ինչպէ՛ս մենք եկեղեցիներս միասնական ենք Աւստրալիոյ մէջ յետ COVID-ի, ունինք և՛ մարտահրաւերներ և՛ հնարաւորութիւններ: Ֆորումին թեման է՝ «Յոյսին տուած պատգամները բարդ աշխարհի մը մէջ»: Ֆորումի քննարկումներուն մէջ, ուր հիմնական բանախօսը պիտի ըլլայ եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (ԵՀԽ) ընդհանուր քարտուղար, Հարաւ-Ափրիկեցի հոգևորական փրոֆէսոր Ճերի Փիլլայը, պիտի ուսումնասիրուի յոյսը իրականութիւն դարձնելու և դրական փոփոխութիւններ ներշնչելու ուղիները: Լուսարձակի տակ պիտի առնուին յոյսին այն պատգամները, որոնք կը նպաստեն Աւստրալիոյ եկեղեցիներուն և քրիստոնէական համայնքներու կեանքին և աշխատանքին:

- Ա) ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՔԱԶԱԼԵՐԱՆՔ – հաղորդակցութիւն և ներգրաւուածութիւն (Երբայեցիս 10.24-25)
- Բ) ԿԱՊ և ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ – անդամներու աջակցութիւն և մասնակցութիւն (Մատթեոս 18.20)
- Գ) ՄԻԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ – էքիմենիք քարոզչութիւն (Գործք Առաքելոց 1:8)
- Դ) ՀՆԱՐԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ – Խորհուրդի զարգացում (2 Կորնթացիս 9.8):

2024 Յունիսին կայանալիք Ազգային ֆորումը պիտի քննարկէ, թէ ինչպէ՛ս մենք եկեղեցիներս միասնական ենք Աւստրալիոյ մէջ յետ COVID-ի, ունինք և՛ մարտահրաւերներ և՛ հնարաւորութիւններ: Ֆորումին թեման է՝ «Յոյսին տուած պատգամները բարդ աշխարհի մը մէջ»: Ֆորումի քննարկումներուն մէջ, ուր հիմնական բանախօսը պիտի ըլլայ եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (ԵՀԽ) ընդհանուր քարտուղար, Հարաւ-Ափրիկեցի հոգևորական փրոֆէսոր Ճերի Փիլլայը, պիտի ուսումնասիրուի յոյսը իրականութիւն դարձնելու և դրական փոփոխութիւններ ներշնչելու ուղիները: Լուսարձակի տակ պիտի առնուին յոյսին այն պատգամները, որոնք կը նպաստեն Աւստրալիոյ եկեղեցիներուն և քրիստոնէական համայնքներու կեանքին և աշխատանքին:



Եզրափակելով, Լիզ յանուն NCCA-ի շնորհակալություն յայտնեց Աստուծոյ Աւստրալիոյ մէջ Հայ Առաքելական Եկեղեցոյ Էքիմենիք յանձնառութեան համար, մասնատրապէս նշելով NCCA-ի առաջին նախագահ Ադան Արք. Պալիօզեանը, Բարձրաշնորհ Տէր Հայկազուն արքեպիսկոպոս Նաճարեանը, NCCA-ի անցեալի գործադիր մարմնի անդամ Օրդ. Սոնա Պէրպլերեանը, Ստեփան Գրգեաշարեանը, Տոքթ. Արթին Ճէպլէճեանը, եւ Նշան սարկաւազ Պասաճեանը:

Դասախօսուիլիին տրուեցան բազում հարցեր, որոնց սիրայօժար պատասխանեց:

Սրբազան հայրը կատարեց եզրափակիչ խօսքը եւ փակման աղօթքը: Մանրամասնութեանց համար դիտել դասախօսութեան արձանագրութիւնը հետեւեալ յղումով [Online Lecture: 30 YEARS OF THE NATIONAL COUNCIL OF CHURCHES IN AUSTRALIA 1 May 2024](#)

Եշ., 2 Մայիսէն 10 Մայիս – Սրբազան Հայրը մեկնեցաւ Վիլթնամի Հօշիմին քաղաքը, պատարագելու եւ օրհնութիւնը կատարելու Հօշիմինի առաջին Պատուոյ հիւպատոսութեան: Մանրամասնութեանց մասին կարդալ Պրն Յակոբ Պօղոսեանի հետ Փարոսի կատարած հարցազրոյցը (էջ 16):

Եշ., 9 Մայիս – Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Էտկարեան Սրահին մէջ, Սրբազան հօր օրհնութեամբ տեղի ունեցաւ ժողովրդային հաւաք կազմակերպուած ՀՅԴ Աւստրալիոյ Կեդրոնական Կոմիտէի եւ անոր ուղեկից միութիւններուն, ի գորակցութիւն Բարձրաշնորհ Տէր Բագրատ Արք. Գալստանեանի գլխաւորած «Տաւուշ Յանուն Հայրենիքի» շարժումին: Բագրատ Սրբազան եւ Տաւուշի մարզէն Հայեր, 4 Մայիսին քայլերթ սկսան Տաւուշէն դէպի Երեւան: Քայլերթին միացան բազմահազար Հայեր եւ Եզիտի ու այլ փոքրամասնութեանց պատկանող Հայաստանի քաղաքացիներ:



Ուղիղ երէրով կապ հաստատուեցաւ Երեւանի հետ եւ ներկաները կարողացան ակնդրել քայլերթը, որուն մասնակիցները արդէն մօտեցած էին Երեւան քաղաքին:

Արժանապատիւ Քահանայ հայրեր Տէր Աւետիս Համբարձումեանի եւ Տէր Միւռոն Աւետիսեանի եւ 250-ի հասնող գորակիցներու ներկայութեան երիտասարդ հանդիսավար Հրանդ Պեօճիւբեան կատարեց բացման խօսքը եւ ողջունելէ ետք ներկաները յայտարարեց «Հայրենիքի այս ճգնաժամային պայմաններուն, հազարաւոր քիլոմէթրներ հեռու, այստեղ եկած ենք մեր գորակցութիւնը յայտնելու մեր քոյրերեւուն ու եղբայրներուն, որոնք կը շարունակեն պայքարիլ ընդդէմ սուտի, ընդդէմ կեղծիքի, յանուն



ճշմարտութեան, յանուն արդարութեան եւ յանուն Հայրենիքի»: Յանուն Կեդրոնական Կոմիտէի, խօսք առաւ Պրն Ներսէս Պալիօզեան: Աանդրադառնալով Խրիմեան Հայրիկի «Երկաթէ Շէրեփ»ի պատգամին եւ զուգահեռ մը գծելով անոր եւ «Տաւուշը Յանուն Հայրենիքի» շարժումին միջեւ՝ ան ըսաւ.

«Այսօր եւս Հայ եկեղեցին կ'առաջնորդէ այդ պայքարը, Հայ հոգեւորականը անգամ մը եւս ոտքի՛ է: Իսկ մենք այսօր հաւաքուած ենք այստեղ անվերապահօրէն սատարելու այդ պայքարին, որովհետեւ լռելը այլեւս մեղսակցութիւն է: ... Այսօր ՀՅԴ-ն, իր կազմակերպական կառոյցով, վճռական կը կանգնի Հայ Առաքելական Եկեղեցոյ եւ այս պայքարին կողքին»:

Եզրափակիչ պատգամը փոխանցեց Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան: Ան յստակօրէն բացատրեց որ այսօր Հայ ժողովուրդը խաբուած է օրուան իշխանութեան կողմէ, որուն հետեւանքն է բռնագրաւուած Արցախը եւ բազմահազար զոհուածներ: Անգամ մը եւս յիշեցուց որ Հայ եկեղեցին այսօր կանգնած է Հայրենիքի եւ Հայ ժողովուրդի կողքին, բան մը որ կատարած է դարեր շարունակ ի գին զրկանքներու, հալածանքի եւ հազարաւոր հոգեւորականներու նահատակութեան: Տէր հայրը մաղթեց որ Տաւուշ Յանուն Հայրենիքի շարժումը յաջողութեամբ հասնի իր նպատակին:

Զօրակցական հաւաքը աւարտեցաւ Արժանապատիւ Տէր Աւետիս եւ Տէր Միւռնոն քահանայ հայրերու եզրափակիչ աղօթքով:



Ուրբ., 10 Մայիս – Կազմակերպութեամբ Նիւ Սաութ Ուելլզի Էքիւմէնիք Խորհուրդին (ՆՍՈԷԽ), Բէտֆրընի Յոյն Ուղղափառ Տաճարին մէջ տեղի ունեցաւ աւանդական «Էքումէնիք Աղօթք Քրիստոնէական Միասնութեան» (Ecumenic Prayer for Christian Unity), իսկ անմիջապէս ետք, կողքի սրահին մէջ՝ աւանդական Դրամահաւաքի Ընթրիքը: Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Թեմական Խորհուրդի փոխատենապետ Տէր եւ Տիկին Ստեփան եւ Հիլտա Գրգեաշարեանի, Առաջնորդարանի Բարեկամ եւ Էքիւմէնիք Խորհուրդի Աստուածաբանական Յանձնաժողովի անդամ Տոքթ. Արթին Ճէյէճեանի, Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ ծխական խորհուրդի ատենադպիր Հերման Մահմուրի, Լոյս ամսաթերթի խմբագիր Պօղոս Սրկ Քէլէշեանի, եւ Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբի անդամ Մարօ Մարգիսեանի: Յիշեցնենք որ այս ձեռնարկներուն կազմակերպիչ յանձնախումբի ատենապետն է դիւանապետ Նշան Սրկ Պասմաճեան: Ձեռնարկը կը զուգադիպէր Յոյն Ուղղափառ եկեղեցոյ Աւստրալիոյ թեմին հիմնադրութեան 100-ամեակին: Կամքէ անկախ պատճառով ձեռնարկներուն չկարողացաւ մասնակցիլ Առաջնորդ Մաքարիոս Արքեպիսկոպոսը: Հոգեպարար արարողութեան հանդիսապետեց եւ քարոզեց Եաքովոս Եպիսկոպոսը: Ընդհանրապէս Յոյն ծէսի երեկոյեան ժամերգութեան շարականներով (Յունարէն եւ Անգլերէն) կատարուեցաւ երգեցողութիւնը, որուն մասնակցեցան աւելի քան 20 Յոյն հոգեւոր հայրեր եւ Տաճարի երգչախումբը: Հայկազուն Սրբազան հայրը երեք հոգեւորականներէն մին էր որ կարդաց համապատասխան աղօթք: Բազմաթիւ եկեղեցիներու ներկայացուցիչներ մասնակցեցան արարողութեան, ինչ որ իսկական էքիւմէնիք տարազ դրաւ ձեռնարկին վրայ: Դրամահաւաքի ընթրիքի հանդիսավարուի Մանտի Թիպիի հրաւերով Եաքովոս Եպիսկոպոս կատարեց բացման աղօթք եւ բարի գալուստի խօսք: Յոյն ազգագրական The Hellenic Lyceum St Sophia Dance Group-ը ներկայացուց յունական ազգագրական պարերու շարք մը, ծափողօյններ խլելով ներկաներին:





Գլխավոր խօսք առնողն էր Յոյն Առաջնորդարանի դիսանապետ Քրիսթոֆորոս Քրիքելլիս (Very Rev Christophoros Krikellis) վարդապետը, որուն պատասխանեց Պաթիրրաթի Կաթողիկ Առաջնորդ Մայքրլ Մաքենա եպիսկոպոսը (Most Rev Michael McKenna, Catholic Bishop of Bathurst): Իր քաջակերանքի խօսքը ուղղեց նաեւ նահանգային խորհրդարանի բազմամշակոյթի քարտուղար եւ Օերակոյտի անդամ Մարք Պութիգիկը (The Hon Mark Buttigieg MLC, NSW Parliamentary Secretary for Multiculturalism): Այս տարի եկեղեցապետերուն ուղարկուած հրաւերներուն մէջ խնդրուած էր

երիտասարդի մը ուղեկցութիւնը տուեալ եկեղեցապետին: Ուստի առիթ տրուեցաւ երկու երիտասարդներու որ ներկայացնեն քրիստոնէայ երիտասարդներու խօսքը: Անոնք էին՝ Եունայթիսկ եկեղեցիէն Սիոսիանա Ճոյս Թանկի (Siosiana Joyce Tangi), Uniting Church եւ Տիոնիսիոս Պօզիքիս, Յոյն Ուղղափառ Եկեղեցիէն (Dionysios Bozakis, Greek Orthodox Church): Եզրափակիչ խօսքը եւ աղօթքը կատարեց ՆՍՈԷԽ-ի նախագահ Անասթազիոս Պօզիքիս քահանան (Very Rev Anastasios Bozakis, President of NSWEC): Արժէ յիշել որ Յոյն Ուղղափառ Եկեղեցին հոգաց ընթրիքի բոլոր ծախսերը, որուն շնորհիւ եւ յանձնախումբի կազմակերպ աշխատանքով կարելի եղաւ ապահովել աւելի քան 16000 Տոլար, գործածելի էքիմենիք զանազան ծրագիրներու իրականացման համար: 150-է աւելի ներկաները մեծ տպաւորութեամբ բաժնուեցան սրահէն: Խորհուրդը իր շնորհակալութիւնը յայտնեց բոլոր նուիրատուներուն եւ վիճակաձգութեան համար տրամադրուած նուերներու նուիրատուներուն, որոնց մեծամասնութիւնը կը կազմէին Հայ նուիրատուները, որոնք մեծապէս կը գնահատեն էքիմենիքմի ի խնդիր տարուած աշխատանքները:



նութեան ըստ Աւստրալական օրէնքներու: Անդրադարձ մանաւանդ Ասորի կարգաւոյժ Մարի Եպիսկոպոսի վրայ կատարուած յարձակումը նկատի առնելով:

Ք2., 13 Մայիս – Սրբազան հայրը մասնակցեցաւ Աւստրալասիական Մերձաւոր Արեւելքի Եկեղեցիներու (ԱՄԷՔ) եկեղեցապետերու ժողովին, որ տեղի ունեցաւ Լիտոնիայի Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ մէջ, հիւրընկալութեամբ Գերյարգելի Հայր Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Սուսանեանի: Ժողովը անդրադարձաւ Մերձաւոր Արեւելքէն գաղթողներու իրավիճակին եւ անոնց ի նպաստ տարուող աշխատանքներու օրինակաւ կատարուեցաւ եկեղեցիներու ապահովութեան, եկեղեցիներու եկեղեցիներու ապահովութեան, կատարուած յարձակումը նկատի առնելով:



Ժողովը նաև լսեց իւրաքանչիւր եկեղեցապետի բերանացի տեղեկատուութիւնը իր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած իրադարձութեանց մասին: 2025-ը Նիկիոյ Հանգանակի 1700-ամեակն է: Ժողովը անդրադարձաւ անոր: Առաջարկներ եղան որոշ միջոցառումներու:

Գ2., 14 Մայիս – Սրբազան հայրը նախագահեց Թեմական Խորհուրդի հերթական ժողովին, որուն հիմնական օրակարգն էր 18 Մայիսին Մելպուրնի մէջ գումարելի Թեմական Պատգամաւորական Ժողովը (ԹՊԺ): Վաւերացուեցան օրակարգը, նիւթաբարոյական տեղեկագիրները, ժողովին կատարելի առաջարկները:

Շբ., 18 Մայիս – Մելպուրնի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ կից սրահին մէջ առաւօտեան ժամը 9.30-ին, Սրբազան հոր նախագահութեամբ, սկսաւ Կալուածոց Յանձնախումբի տարեկան ընդհանուր ժողովը, որ տեւեց մինչև ժամը 12.30: Ժամը 1- 7, դարձեալ Սրբազան հոր նախագահութեամբ, տեղի ունեցաւ Թեմական Պատգամաւորական Ժողովը, մասնակցութեամբ 22 իրաւասու պատգամաւորներու թեմիս չորս ծուխերէն, եւ 6 հիւրերու՝ դիւանապետ, երիտասարդական միութիւններու եւ Բարեկեցութեան կեդրոններու ներկայացուցիչներու: Ժողովին դիւանը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը. Ատենապետ՝ Պրն Զաւէն Եաղճեան, ատենադպիր (Հայերէն)՝ Պրն Յարութ Օզճեան, ատենադպիր (անգլերէն)՝ Օրիորդ Մարալ Գեորգ: Օրակարգի վաւերացումէն ետք կարդացուեցաւ ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան գիրը: Ժողովը վաւերացուց 2023-ի ԹՊԺ-ի ատենագրութիւնը, որմէ ետք տեղեկացաւ Սրբազան հոր եւ Թեմական Խորհուրդի միամեայ գործունէութեանց բարոյական եւ նիւթական տեղեկագիրներուն եւ վաւերացուց զանոնք: Նոր Զելանտայի Օքլանտ քաղաքի Սուրբ Գրիգոր



Լուսաւորիչ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ Տոքթ. Զաւէն Փանոսեան ամփոփ տեղեկագիր ներկայացուց Օքլանտի Հայ համայնքի ազգային-հոգևոր աշխատանքներուն մասին: Ժողովը քննեց ծուխերէն եկած հարցերը եւ տուաւ անոնց պատշաճ լուծում: Ներկայացուեցան Սիտնիի եւ Մելպուրնի Բարեկեցութեան կեդրոններու եւ երիտասարդական միութեանց տեղեկագիրները, զորս գնահատուեցան ժողովին կողմէ: Ժողովը վաւերացուց 2024-ի պիտճէն եւ տեղեկացաւ Հայկազուն Արքեպիսկոպոս Առաջնորդ Հայրը փոխարինողին առնչութեամբ տարուած եւ տարելիք աշխատանքներուն մասին:

Ժողովը հաստատեց Բանաձևի Յանձնախումբին զեկուցումը և ճշդեց 17 և 18 Մայիս 2025-ը որպես յառաջիկայ ԹՊԺ-ի գումարման թուական՝ Սիսնի, Սուրբ Յարութին Եկեղեցի:

Սրբազան հայրը երկու տարի առաջ, հետևելով Մայր Աթոռի կանոնագրության տրամադրություններուն, 70 տարիքին հրաժարեցաւ իր պաշտօնէն: Սակայն Թեմական Խորհուրդի և ԹՊԺ-ի խնդրանքով և Սրբազան հօր յօժար կամքով, Վեհափառ Հայրապետը երկու տարիով երկարաձգեց անոր պաշտօնավարութիւնը: Երկու տարուան ժամկետը կ'աւարտի 31 Ղեկտեմբերին: Անդրադառնալով այս իրողութեան, Սրբազան հայրը իր շնորհակալութիւնը յայտնեց բոլորին անխտիր, համայնքի բոլոր զաւակներուն, անոնց ցուցաբերած յարգանքին և զօրակցութեան ու անվերապահ գործակցութեան:



Ժողովը փակուեցաւ Սրբազան հօր Պահպանիչով:



Կիր., 19 Մայիս – Սրբազան հայրը հանդիսապետեց Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ մէջ մատուցուած Սուրբ Պատարագին, որուն մասնակցեցան Արժանապատիւ Տէր Աւետիս և Տէր Սիւնոն Քահանայ Հայրերը, ինչպէս նաև՝ Թեմական Պատգամաւորական Ժողովին և Կալուածոց Յանձնախումբի ընդհանուր ժողովին մասնակիցները: Պատարագեց և քարոզեց Արժ Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեան: Սրբազան հայրը օրհնեց Եկեղեցւոյ մէջ զետեղուած զանգը, նուիրուած բարեպաշտ հաւատացեալի մը կողմէ: Զանգը մեծարժէք է, շինուած է Ռուսաստանի մէջ աւելի քան 100 Մելպուրն: Փարոսի խմբագրութիւնը կը յայտնէ իր

տարի առաջ, բերուած Հայաստան և Հայաստանէն՝ Սելպուրն: Փարոսի խմբագրութիւնը կը յայտնէ իր զնահատանքը անանուն նուիրատուին և կը շնորհաւորէ Ս. Աստուածածին Եկեղեցին այս ձեռքբերման համար: Յաւարտ Սուրբ Պատարագի տեղի ունեցաւ ճաշկերոյթ-հիւրասիրութիւն ի պատիւ Պատգամաւորներուն: Սրբազան հայրը նոյն երեկոյ վերադարձաւ Սիսնի:

Շբ., 25 Մայիս – Հինգ տարի առաջ Թեմական Խորհուրդը հաստատեց «Առաջնորդարանի Բարեկամներ» դրութիւնը, որ կը միտի Առաջնորդարանին շուրջ հաւաքել անձեր, որոնք հաւատալով անոր առաքելութեան իրենց բարոյական և նիւթական նպաստը կը բերեն անոր զարգացման ու յառաջընթացին:



Ի գնահատանք «Բարեկամներ»ու զորակցութեան, Առաջնորդարանին պատերէն մէկուն վրայ անցեալ տարի զետեղուեցաւ «Կենաց Ծառ» մը, որուն իւրաքանչիւր «տերեւ» կը ներկայացնէ զօրակից-նուիրատուի մը անունը: Այդ ծառը պատրաստեց եւ նուիրեց Պրն Հարրի Թաշճեան եւ զայն զետեղեց Առաջնորդարանի նշեալ պատին վրայ, եւ որուն օրհնութիւնը կատարուեցաւ 6 Մայիս 2023-ին, «Բարեկամներ»ուն ի պատիւ տրուած քոթէլիին ընթացքին: Ամէն տարի, ընդհանրապէս Մայիսին, Առաջնորդարանը քոթէլյով մը շնորհակալութիւն կը յայտնէ իր «Բարեկամներ»ուն եւ կը հրաւիրէ զանոնք եւ նոր թեկնածուներ մասնակցելու այս ծրագրին: Այս օրը, յիսունէ աւելի անձեր մասնակցեցան քոթէլիին, հովանաւորութեամբ Սրբազան հօր: Առաջնորդարանի Տիկնանց Յանձնախումբի աշխուժ եւ գիտակից տիկիները պատրաստած էին համեղ ուտեստներ, որոնք մեծապէս գնահատուեցան ներկաներուն կողմէ: Միասնական Տէրունական աղօթքէն եւ Սրբազանին սեղանի օրհնութենէն ետք, հանդիսավարը Դիւանապետ Նշան Սարկաւազ Պասմաճեան հրաւիրեց Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն Սարգիս Տէր Պետրոսեանը բարի գալուստի իր խօսքը արտասանելու: Պրն Տէր Պետրոսեան ներկաներուն փոխանցեց Թեմականի գնահատանքը, առողջութիւն մաղթեց բոլոր այն «Բարեկամներ»ուն, որոնք առողջական պատճառներով չէին կարողա-ցած ներկայ ըլլալ, ցուակցութիւն յայտնեց բոլոր հանգուցեալ բարեկամներու պարագաներուն եւ իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդարանի Բարեկամներուն, անոնց անկեղծ զօրակցութեան համար: Ապա խօսք առաւ Սրբազան հայրը եւ ներկայացուց այն հոգեւոր եւ ազգային աշխատանքները, որոնք վերջին մէկ տարուան ընթացքին տարուեցան Առաջնորդարանին կողմէ յօգուտ Աւստրալահայ համայնքին, Արցախին, Հայրենիքին եւ Էքիմէնիք ընտանիքին, որուն մէջ իր մեծ դերակատարութիւնը ունի Հայ եկեղեցին: Խօսք առաւ Դիւանապետը եւ հակիրճ ներկայա-ցուց նիւթական պատկերը Առաջնորդարանին, եւ յայտնեց որ պիտաճէին քառորդը կ'ապահովուէր շնորհիւ Առաջնորդարանի Բարեկամներու նիւթական զօրակցութեան: Ան իր յարգանքի խօսքերով անդրադարձաւ մեզմէ յաւեո բաժնուած «Բարեկամներ»ուն եւ քաջալերեց նոր «Բարեկամներ» փոխարինելու համար զանոնք:



Իրօք, մեծապես գնահատելի էր տեսնելը նոր Առաջնորդարանի Բարեկամներ, որոնք իրենց մասնակցությունը առաջարկեցին այս ծրագրին, ըմբռնելով Առաջնորդարանի կարեւորությունն ու առաքելությունը: Կենաց Ծառին մօտ, Սրբազան հօր գլխավորությամբ եւ քահանայ հայրերու մասնակցությամբ, տեղի ունեցաւ օրհնություն բոլոր հին եւ նոր Առաջնորդարանի Բարեկամներուն: Ընկերային մթնոլորտը հետզհետէ աւելի մտերմիկ դարձաւ: Ներկաներէն շատեր իրենց խորհուրդները փոխանցեցին Սրբազան հօր ու Թեմականի անդամներուն: Երեկոյին պաշտօնական մասը աւարտեցաւ Սրբազան հօր փակման աղօթք-օրհնությամբ, որմէ ետք հիւրերը շարունակեցին իրենց մտերմիկ, հաճելի եւ արդիւնաւէտ խօսակցությունը: Յիշատակելի երեկոյ մը:






Կիր., 26 Մայիս – երեկոյեան ժամը 5:00-ին, նախագահութեամբ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանի, Սուրբ Յարութին եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ «ՎԱՐՔ ՄՐԲՈՑ» Հայաստանեայց եկեղեցոյ սուրբերու կեանքը ներկայացնող համերգներու շարքին առաջինը, որ նուիրուած էր Սրբոց Հռիփսիմեանց կոյսերուն: Համերգը կազմակերպուած էր Կիրակնօրեայ Դպրոցի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին կողմէ, գեղարուեստական ղեկավարութեամբ Պօղոս սրկ. Քելէշեանի: Համերգի խօսնակն էր Տիկ. Քրիստինա Բաղդասարեանը իսկ բանախօսը՝ Արժ. Տ. Աւետիս քինյ. Համբարձումեանը: Քահանայ հայրը նշեց սուրբերու

կեանքի ընթերցանութեան կարեւորութիւնը, բացատրեց սուրբ բառի եւ սրբութեան իմաստը, ներկայացուց Սրբոց Հռիփսիմեանց վարքը, եւ խօսեցաւ սուրբերուն աղօթելու եւ անոնց մասունքները յարգելու քրիստոնէական ասանդոյթներուն մասին: Համերգին մասնակցեցան Կիրակնօրեայ դպրոցի սաները, Սուրբ Յարութին եկեղեցոյ սարկաւազներ՝ Վարդան սրկ. Քեօշկերեան, Գրիգոր սրկ. Սեդրակեան, եւ Սարգիս սրկ. Իսկէնեան, Արի Եսփուճեանը, աղջկանց երգչախումբը՝ Ալին Եսփուճեան, Անճելինա Սեդրակեան, Բայիկ Կեօզիւքարայեան, Իգապէլ Մարգարեան, Մարինէ Աղայեան, եւ Նաթալի Տէր Պետրոսեան, նուագակցութեամբ Սարգիս դպիր Համբարձումեանի: Համերգին ընթացքին հնչեցին քարոզներ ու շարականներ՝ նուիրուած կոյսերուն, որոնց ամենայատկանշականը Կոմիտաս վարդապետի մշակմամբ «Անձինք Նուիրեալք» շարականի եռաձայն կատարումն էր աղջկանց երգչախումբին կողմէ: Աւարտին, Սրբազան Հայրը իր սրտի խօսքով շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակիցներուն, շեշտեց քահանայ հօր նշած՝ սուրբերու վարքի ընթերցանութեան կարեւորութիւնը, քաջալերեց փոքրերն ու երիտասարդները շարունակել սորվիլ եւ երգել մեր եկեղեցոյ շարականները, եւ սուրբերու բարեխօսութեան աղօթքով մը փակեց համերգը: Տիկնանց միութիւնը նաեւ իր ներդրումը ունեցաւ այն երեկոյեան համեղ ճաշատեսակներու պատրաստութեամբ՝ եկեղեցոյ սրահին մէջ:

Գշ., 28 Մայիս – Սրբազան հայրը նախագահեց Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի խնամակալ մարմնի ժողովին:



Դշ., 29 Մայիս – Առաջնորդարանի կազմակերպած առցանց դասախօսութեանց 30-րդը տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 7-ին: Նիւթ՝ «Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ Վանքի Պատմութիւնը» – դասախօս՝ Պրն Թովմա Գալստանեան եւ «Սպահանի Հայոց Թեմի Կառոյցը եւ Ընդհանուր Աշխատանքներ» - Դասախօս՝ Տիկին Վերգինէ Միրզախանեան: Դասախօսները ուղիղ եթեր կապուեցան Պարսկաստանէն, Նոր Ջուղայի Ազգային Առաջնորդարանէն: Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանի բացառական ներկայացուց դասախօսները, որոնց

ման աղօթքէն ետք, հանդիսավար Նշան Սարկաւազ կենսագրութիւնները՝ ստորեւ:



Պրն Թովմա Գալստանեան

Ծնած է 1977-ին Նոր Զուղա: Ամուսնացած է եւ հայր երկու զաւակներու: Նախնական ուսում՝ Նոր Զուղայի հայկական վարժարաններուն մէջ: 1999-2000 ուսանած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Դպրեվանքին մէջ: 2000-էն սկսեալ կ'աշխատի Սպահանի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանին մէջ: Ներկայիս կը վարէ արխիւներու եւ Առաջնորդարանի Մատենադարանի բաժնի պատասխանատուութիւնը, եւ փաստաթուղթերու եւ Ձեռագրերու վերակնգնման աշխատանոցի մասնագետի պաշտօնը:

Տիկին Վերգինէ Միրզախանեան

Ծնած է 1987ին, Նոր Զուղա: Ամուսնացած է: 1994-2006 ուսանած է Նոր Զուղայի Հայոց Ազգային «Արմէն» տարրական եւ «Քանանեան» միջնակարգ դպրոցներուն մէջ: 2007-2011 Ստացած է տնտեսագիտութեան մասնագիտութեան վկայական: 2011-2015 կը ստանայ տեղեկատուական գիտութիւններու եւ գրադարանավարութեան (Library Science) մասնագիտութեան վկայական: 2009-2013 աշխատած է Նոր Զուղայի Հայոց Ազգային «Քանանեան - Կատարինեան » միջնակարգ դպրոցին մէջ, որպէս գրադարանավար եւ համակարգչային գիտութիւններու դասատու: 2013-էն սկսեալ կը պաշտօնավարէ Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ Վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան, որպէս պատասխանատու: Սոյն ժամանակահատուածին մէջ կարողացած է ամբողջապէս արդիականացնել գրադարանը եւ հետաքրքրութիւն ստեղծել համայնքի անդամներուն մօտ ընթերցանութեան նկատմամբ, ինչպէս նաեւ ընդարձակել միջազգային կապերը այլ գրադարան-մատենադարաններու հետ: 2014-էն ի վեր քարտուղարն է Սպահանի Հայոց Թեմի տարբեր շրջաններու Թեմական Խորհուրդներուն: 2020-էն ի վեր կը պաշտօնավարէ որպէս Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ Վանքի Հանրային կապերու պատասխանատու:



Այլ Աշխատանքներ

Անդամակցած է Նոր Զուղայի Հայոց Ազգագրական եւ Երաժշտական թանագարաններու հիմնադրման յանձնախմբերուն:

Պրն Թովմա Գալստանեան կատարեց պատմականը Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ Վանքին, սկսելով Շահ Աբբասի օրերէն, տալով մանրամասնութիւններ ոչ միայն Սպահանի եւ Նոր Զուղայի հայ համայնքներուն տեղակայման մասին այլ Թեհրանի, Թավրիզի եւ այլ իրանեան քաղաքներուն մէջ հաստատուած հայութեան մասին:

«Սպահանի Հայոց Թեմի Կառոյցը եւ Ընդհանուր Աշխատանքներ» նիւթը ներկայացուց Տիկին Վերգինէ Միրզախանեան, մօտէն ծանօթացնելով ակնդիրներուն զօրաւոր կառոյցը Նոր Զուղայի թեմին:

Այս երկու դասախօսութեանց արժէքը կը գտնուի անոնց մանրամասնութեանց եւ ժամանակագրութեան մէջ: Այդ պատճառով կը թելադրենք մեր ընթերցողներուն ակնդրել դասախօսութեանց արձանագրութիւնը եւ Սուրբ Ամենափրկիչ Վանքի որմանակարները հետեւեալ յղումները սեղմելով:

Lecture: New Julfa & Diocese of Isfahan <https://www.youtube.com/watch?v=vKbNaWW05QQ>

եւ <https://www.alamy.com/stock-photo-inside-the-vank-cathedral-the-armenian-church-in-the-julfa-neighborhood-170029603.html>

Ակնդիրները հարցեր տուին, որոնց հանգամանօրէն պատասխանեցին դասախօսները: Սրբազան հօր սրտի եզրափակիչ խօսքով եւ Պահպանիչով աւարտեցաւ այս պատմական կարեւոր բովանդակութեամբ ձեռնարկը:



Ուրբ., 31 Մայիս – Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Արժանապատիւ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեանի, Թեմական Խորհուրդի ատենապետ եւ փոխատենապետ Տիարք Սարգիս Տէր Պետրոսեանի եւ Ստեփան Գրգեաշարեանի ինչպէս նաեւ Դիւանապետ Տիար Նշան Պասմաճեանի, ներկայ գտնուեցաւ Համազգային Գօլատըն Ճեմարանի աւանդական Մեծ Ծնողաց Օրուան հանդիսութեան առաւօտեան ժամը 11-էն կէսօրէ ետք ժամը 2: Ճեմարանի Նալպանտեան սրահը կը յորդէր Հայկական կարգ

մը կազմակերպութեանց ներկայացուցիչներով, բայց մանաւանդ մեծ ծնողներով եւ բարեկամներով, որոնք խուռներամ եկած էին վայելելու իրենց թոռներուն ասմունքները, խմբային թէ անհատական, երգերը, թատրերգութիւնները, Հայաստանի Առաջին Հանրապետութեան 106րդ տարեդարձին առթիւ անոնց փոխանցելիք պատգամները: Եւ իրօք՝ անոնք փոխանցեցին անկախութեան պատգամը, տեղեկացուցին ներկաները Հայոց պատմութեան զանազան դրուագներուն մասին, կրցան դրոշմել հանդիսատեսներուն մտքերուն մէջ Սարտարապատի կարեւորութիւնը մեր կեանքին մէջ: Աւարտին հնչեց «Միասնութեան Երգ»ը, որը ձեռք ձեռքի պարեցին նախակրթարանի աշակերտները, ուսուցիչներու, հանդիսատեսներու եւ մեծ ծնողներու հետ: Սրբազան հայրը հրաւիրուեցաւ տալու իր սրտի խօսքը: Ստորեւ՝ Սրբազանին խօսքը.

*«Միրելիներ,
Կարծեմ այս պահուն բոլոր մեծ հայրերն ու մեծ մայրերը ուրախ են իրենց թողնիկներով, որովհետեւ այս երկուքուկէս ժամուան մէջ անոնք ցոյց տուին Հայերէն խօսքով, երգով ու պարով իրենց ունակութիւնը, անոնք իրենց սէրը արտայայտեցին մեր սիրելի մեծ հայրերուն ու մայրերուն: Եւ մանաւանդ այս օրերուն, երբ Սփիւռքի տարբեր վայրերու մէջ մեր ժողովուրդը աւելի տկարացած է, դպրոցներ կը փակուին, Արցախի կորուստ եւ բռնագաղթ, որուն անդրադարձան աշակերտները, չենք խօսիր Հայաստանի մէկ մասին բռնագրաւումին մասին, տակաւին չենք խօսիր Հայաստանի ներկայ վիճակին մասին, որուն ապագան անորոշ է: Չենք գիտեր թէ ուր կ'երթանք եւ վաղը ինչ պիտի պատահի: Միայն մէկ բան յայտնի է, որ այնտեղ ազգային արժէքներ եւ աւանդութիւններ մէկ կողմ կը դրուին յանուն կտոր մը հացի կարծէք...»*





Խաղաղութեան եւ անոր ճանապարհին մասին կը խօսուի... Լաւ կ'ըլլայ որ վեցերորդ դասարանի աշակերտները դրկենք Հայաստան, որ ստրվեցնեն թէ խաղաղութիւնը ինչ ձեւով կարելի է ձեռք բերել: (Որոտընդոստ ծափողջոյններ)... Երբ այս հանդիսութիւնը սկսաւ, ի գուրտեղը չէր որ «Մարտարապատ» երգով սկսաւ, ոչ միայն որովհետեւ հանդէսը Մարտարապատի եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան տարեդարձին կը համընկնի, այլ որովհետեւ Մարտարապատը մեր ոգին է, մեր այցեքարտն է, մեր ապրելու եւ գոյատեւելու, մեր աշխարհի վրայ գոյութիւն ունենալու, մեր ուժով, մեր միասնական ուժով ձեռք ձգելու այդ իրաւունքն է, որ այսքան տարիներ յետոյ կը նշենք ու կ'ոգեկոչենք...: Առանց Մարտարապատի ոչ Հայաստան գոյութիւն պիտի ունենար, ոչ ալ Հայ ժողովուրդը: Պատմութիւնը միայն պիտի արձանագրէր որ անցեալի մէջ այսպիսի տաղանդաշատ պատմութիւն

ունեցող ազգ մը գոյութիւն ունեցած է, որ ինչ-ինչ պատճառներով վերացած է...:

Այսօրուան այս համերգը նուիրուած մեծ հայրերուն ու մայրերուն, կու գայ ըսելու որ Սփիւռքի այս հեռաւոր վայրերուն մէջ Հայ ժողովուրդը իր գոյատեւման պայքարը կը շարունակէ եւ հաւատարիմ է Մարտարապատի ոգիին, այն ոգիին, որ մեզի ուժ ու ներշնչում կու տայ, մեր նախնեաց աւանդութիւնները մեր սրբազան էութեան մէկ մասնիկն են եւ առանց անոնց մենք գոյութիւն չունինք: Հետեւաբար, ապրի ն մեր աշակերտները, ուսուցիչները, մեծ հայրերն ու մայրերը: Հայկականութեան շիճուկ ստացանք մենք



այսօր, եւ այդ մեզի կեանք ու եռանդ պիտի տայ եւ մեծ հայրերն ու մեծ մայրերը պիտի հպարտանան որ իրենց թոռները պիտի շարունակեն իրենցմէ ժառանգած աւանդութիւնը» եզրափակեց Սրբազանը:

Ազգային ոգեւորութիւն ներշնչող հանդիսութիւնը փակուեցաւ Սրբազան հօր Պահպանիչով:

Հաղորդագրություն ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ՝ «ՏԱՒՈՒՇԸ ՅԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ»

Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանը, Թեմական Խորհուրդը եւ Եկեղեցական դասը իրենց զօրակցութիւնը կը յայտնեն «Տաւուշը Յանուն Հայրենիքին» հոգեւոր եւ ազգային շարժումին:

Համազգային ընդվզում ստեղծած հայրենի կառավարութեան միակողմանի հողային զիջումները դատապարտելի են:

Մեր ձայնը կը միացնենք Վեհափառ Հայրապետին, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին եւ բազում թեմական Առաջնորդներուն, եւ կը պահանջենք Հայաստանի իշխանութիւններէն սթափիլ եւ վերջ տալ զիջումի քաղաքականութեան, տէր կանգնիլ Հայաստանի ամբողջականութեան եւ ազգային իրաւունքներուն:

Բարձրաշնորհ Տէր Բագրատ Արքեպիսկոպոս Գալստանեանի գլխաւորած շարժումին նպատակը արդարութեան եւ իրաւունքներու պահանջքին գործադրութիւնն է: Մենք սատար կը հանդիսանանք այդ նպատակին եւ նեցուկ պիտի կանգնինք անոր իրականացման: Կը հաւատանք, որ շնորհիւ ժողովրդային զօրակցութեան եւ պահանջքին, Հայաստանի մէջ եւ Սփիւռքի, կարելի պիտի ըլլայ տէր հանդիսանալ Հայ ժողովուրդին արդար իրաւունքներուն:

Աղօթարար՝
Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան
Առաջնորդ Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմին

Միտնի, 10 Մայիս 2024

Հաղորդագրություն ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԲՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Շաբաթ 18 Մայիսին, Մելպուրնի Հայ Առաքելական Սուրբ Աստուածածին Եկեղեցույ սրահին մեջ տեղի ունեցան Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Թեմական Պատգամաւորական ինչպէս նաեւ Կալուածոց Յանձնախումբի տարեկան Ժողովները, նախագահութեամբ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանի, բարեխնամ Առաջնորդը թեմիս:

Թեմական Պատգամաւորական Ժողովին մասնակցեցան Աստրալիոյ երեք ծխական խորհուրդներու ներկայացուցիչները (Սուրբ Յարութին, Սուրբ Երրորդութին, Սուրբ Աստուածածին) իրենց հոգեւոր հովիւներով, եւ Օքլանտի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցույ ծխական խորհուրդի ներկայացուցիչը: Աստրալիոյ երեք եկեղեցիներու երիտասարդաց միութեանց, եւ Սիտնիի ու Մելպուրնի Բարեկեցութեան գրասենեակներու ներկայացուցիչները նաեւ հրաւիրուած էին եւ մասնակից դարձան ժողովին:

Ժողովը տեղեկացաւ Առաջնորդ Սրբազան հօր եւ Թեմական Խորհուրդին միամեայ գործունէութեանց, քննարկեց անոնցմէ բխած հարցերը, վաւերացուց տեղեկագրերը եւ ճշտեց յառաջիկայ գործունէութեան ուղեգիծը: Ժողովը քննեց նաեւ Հաշուեքննիչին կողմէ ներկայացուած հաշիւները եւ վաւերացուց 2024-ի պիւտճէն: Քննարկուեցան ծուխերէն եկած հարցերն ու առաջարկները: Ժողովը տեղեկացաւ երիտասարդական եւ բարեկեցութեան մարմիններու աշխատանքներուն ու ապագայ ծրագիրներուն եւ թեմական խորհուրդին փոխանցեց անոնց բանաձեւած առաջարկները:

Ժողովը իր գնահատանքը արձանագրեց որ հակառակ Արցախի կորուստին եւ անոր բնիկ Հայութեան բռնի տեղահանման, Թեմական Խորհուրդը շարունակած է նեցուկ հանդիսանալ տարաբախտ Հայ ժողովուրդին, իր նիւթական աջակցութիւնը բերելով ուղղակի ընտանիքներուն օգնութիւն հասցնելով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջոցաւ, նաեւ՝ Տաւուշի Թեմին միջոցաւ, Տաւուշ հաստատուած Արցախցի հայորդիներուն:

Ժողովը նաեւ իր գորակցութիւնը յայտնեց Վեհափառ հօր եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին «Տաւուշը Յանուն Հայրենիքին» շարժման սատար հանդիսանալուն առիթով:

Դիւան Առաջնորդարանի
24 Մայիս 2024

Հարցազրույց Պրն Յակոբ Պողոսեանի Հետ Վիեթնամի ՀօՇիՄին քաղաքին մէջ Հայաստանի Պատուոյ Հիւպատոսութեան Բացման եւ Հայկական Առաջին Պատարագին Առիթով

Փարոս: Պրն Պողոսեան, կրնայի՞ք դուք զձեզ ծանօթացնել մեր ընթերցողներուն:

Յակոբ Պողոսեան: Ծնած եմ Աւստրալիա 1970-ին եւ ուսումն ստացած եմ այստեղ: Համալսարանական վկայական ստացած եմ տնտեսագիտութեան եւ փաստաբանութեան ճիւղերուն մէջ 1990-ականներուն իսկ մագիստրոսական վկայական ստացած եմ Business Administration-ի մէջ 2015-ին: Աւելի քան 25 տարի իրաւաբան եմ եւ կ'օգնեմ և կը պաշտպանեմ պաշտօնէաներու իրաւունքները իրենց աշխատանքային գործելադաշտին մէջ, ինչպէս նաեւ անոնց իրաւունքները խտրականութեան, սեռային հալածանքի եւ *սէքսիզմի* առնչուած:

Նաև բաւական աշխուժ համայնքային աշխատանք կատարած եմ սկաուտական, մարմնամարզական, մշակութային և կրթական ոլորտներու մէջ:

Վերջերս, մեր Connect Legal ընկերութիւնը, Բիչըրտ Ասլանեանը եւ ես, ապահովեցինք Աւստրալիոյ մէջ երկու մեծագոյն վճիռներ Բասիզմի հետ առնչուած, հիմք ունենալով 1975 թուականի խտրականութեան վերաբերեալ օրէնքը:

Բիչըրտը նաև կարեւոր աշխատանք կատարած է սեռային խտրականութեան ոլորտին մէջ եւ պաշտպանած պաշտօնէաներու, կանանց եւ փոքրամասնութիւններու իրաւունքները իրենց աշխատավայրին մէջ:

Փարոս: Վերջերս կրթանպաստ մը հաստատեցիք ձեր գործընկերոջ Բիչըրտ-Մերոբ Ասլանեանի հետ: Կրնա՞ք բացատրութիւն տալ այդ մասին:

Յակոբ Պողոսեան: Վերջերս, Բիչըրտին հետ խօսակցութեան ընթացքին, բացատրեցի որ Հայ Առաքելական Եկեղեցին կը գնահատէ HSC ուսանողներ, իրենց տարած արդիւնաբեր աշխատանքին համար եւ լաւ պիտի ըլլար եթէ Connect Legal-ը մրցանակով մը գնահատէր իրաւաբանութեան ոլորտին մէջ Հայ ուսանող մը: Հետեւաբար, պարզեւատրելը տրամաբանական նախաձեռնութիւն պիտի ըլլար, քաջալերելու որ աւելի մեծ թիւով ուսանողներ ուսանէին փաստաբանութիւն: Յուսով ենք որ կրնանք շարունակել սկսուած գործը: Հետեւաբար, մրցանակը հովանաւորելը շատ իմաստալից էր, այդ կը խրախուսէր որ աւելի մեծ թիւով ուսանողներ ուսանէին իրաւաբանութիւն: Յուսով ենք որ պիտի կարենանք յարատեւել յառաջիկայ տարիներուն:



Փարոս: Մայիսին Սրբազան Հայրը, 20-ի չափ ուղեկիցներու հետ յատուկ առաքելութեամբ ՀօՇիՄին ճամբորդեց: Դուք կազմակերպիչն էիք այդ ճամբորդութեան: Խնդրեմ տեղեկացնել այդ մասին, տալով մանրամասնութիւններ:

Յակոբ Պողոսեան: Հետաքրքրական է թէ ինչպէս կարողացանք Հայկական Պատարագ կազմակերպել Վիեթնամի մէջ:



Անցեալ Սեպտեմբերին, Հայկական Ֆիլմերու Փառատօնին, հանդիպեցայ նորանշանակ Պատուոյ Հիւպատոս Գօգօ Օհաննէսեանին, որուն սկաուտական խմբապետ եղած եմ տարիներ շարունակ. հրճուանքս յայտնեցի իր հիւպատոս նշանակման: Նոյն ատեն հարց տուի եթէ հնարաւոր էր հայկական Պատարագ կազմակերպել Վիէթնամի ՀօՇիՄին քաղաքին մէջ: Զինք ներկայացուցի Սրբազան հօր եւ յաջորդող ամիսներուն զանազան հանդիպումներ ունեցանք կազմակերպչական աշխատանքներուն առնչութեամբ: Նախ խօսեցանք դեսպան Պարոն Վահրամ Քաժոյեանի հետ եւ մեր գործը սկիզբ առաւ:

Խօսքը տարածուեցաւ եւ Գոգոյի ժրաջան աշխատանքին շնորհիւ կարելի եղաւ ապահովել Կաթոլիկ եկեղեցի մը ՀօՇիՄինի մէջ եւ ծրագիրը դարձաւ իրականութիւն:

Իրօք, եկեղեցիի մը ապահովումը բաւական ներուժ կը պահանջէր, մանաւանդ որ համայնավար երկրի մը մէջ կը գտնուիս, ուր Պուտտայական կրօնքը պետական կրօնքն է:

Քսան եւ աւելի անձերով ճամբորդեցինք Վիէթնամ, ուր տեղի ունեցաւ Հայկական Առաջին Պատարագը, մասնակցութեամբ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, եկեղեցւոյ խմբավար Վարդան Սարկաւազ Էլմասեանի, Ճորճ Սարկաւազ Նաճարեանի: Պատարագը բացառիկ էր, պատմական եւ տպաւորիչ: Թէ ի՞նչ էր դրդապատճառը Վիէթնամի մէջ մեր մշակոյթը ներկայացնելուն:

Տասնամեակներ շարունակ, ծնողքս՝ Սերբոն ու Հիլտան մեր ընտանիքի անդամներուն մէջ դրոշմած էին կարեւորութիւնը Հայ մշակոյթին՝ պար, երգ, երաժշտութիւն, բանաստեղծութիւն եւ նկարչութիւն:

Միշտ իղձս եղած էր բան մը կազմակերպել մշակութային բնագաւառին մէջ, հետեւաբար մտածեցի թէ ինչպէ՞ս կարելի էր Հայ մշակոյթ ներկայացնել Վիէթնամցիներուն: Ի վերջոյ մեր մշակոյթը իւրայատուկ է, որը մենք մեզի լաւագոյնս կը ներկայացնենք հազարաւոր տարիներէ ի վեր: Կը կարծեմ որ մշակոյթը մեզ բոլորս կը համախմբէ:

Եթէ այք մը նետէք Իրլանտական պարին, Պրագիլական Մամպային, Չինական փիլիսոփայութեան, Անգլիական ճարտարապետութեան, մշակոյթն է որ հասարակ յայտարարի կը բերէ մեզ բոլորս:

Խօսեցայ Գոգոյին եւ ըսի թէ ի՞նչ էր իր կարծիքը կազմակերպելու հայկական մշակութային երեկոյ մը: Ան ողջունեց գաղափարը: Համաձայնեցանք որ ներքին աշխատանքները պիտի տարուէին իր կողմէն իսկ արտաքին աշխատանքները՝ իմ կողմէս:



Բաւական մտածեցի այս մասին եւ այն եզրակացութեան եկայ որ մեր մշակոյթը ներկայացնող կարեւոր եւ իւրայատուկ գործիքներէն մին հայկական Տուտուկն էր:

Շատ բախտաւոր էինք որ գտանք Վիզէն Բալասանեանը, Հայաստանի լաւագոյն տուտուկահարներէն մին, եւ զինք հրաւիրեցինք Վիէթնամ հայկական մշակութային երեկոյին համար: Ապա մտածեցի պարի մասին, որովհետեւ ի վերջոյ պարը արտայայտութիւնն է մեր ազգային նկարագրին եւ պատմութեան: Կապի մէջ մտանք Բերդ պարային համոյթի ղեկավար, պարագիր եւ պարուսոյց Պրն Կարէն Գեորգեանին հետ, բացատրութիւն տուինք ծրագրին մասին եւ ինք ուղարկեց Անահիտ Ստեփանեանը կատարելու յատուկ հայկական մենապարեր:

Պրն Գեորգեանէն խնդրեցի ազգագրական տարագներ գորս յօժարեցաւ տրամադրել: Չորս տարագները Հայաստանի զանազան շրջաններ կը խորհրդանշէին, որոնք գեղեցկօրէն ցուցադրուեցան այդ երեկոյ:

Հայաստանի մէջ իւրայատուկ գեղանկարիչ ընկեր մը ունիմ Սամբրասայտ Արամ անունով, որմէ 7 զծագրութիւններ ցուցադրեցինք: Խօսեցայ նաեւ ընկերներէս Ասատուր Հաճեանի հետ, որ խորհուրդ տուաւ ասմունքել Պարոյր Սեւակի «Քիչ ենք բայց Հայ ենք» բանաստեղծութիւնը, որը թարգմանել տուինք Վիէթնամերէնի եւ որ կարդացուեցաւ այդ լեզուով:

Նաեւ մտածեցի ինչո՞ւ հայերէն երգ մը չերգուի: Խօսեցայ Վարդան Սարկուազին հետ, որ համաձայն գտնուեցաւ եւ ներկայացուց գեղեցիկ երգ մը՝ «Հայոց Տառերը»:

Խորհրդակցեցայ Տէր Աւետիսին հետ, որ հայկական տարագներուն մասին պատրաստեց գեղեցիկ Փաուրը Փոյնթով ներկայացում մը, որուն զուգահեռ բեմին վրայ կը ցուցադրուէին տարագներն ու նկարները:

Հիւպատոսութեան պաշտօնատար Պրն Վանի հետ ունեցանք խորհրդակցութիւններ եւ կարողացանք պատրաստել իւրայատուկ մշակութային ծրագիր: Ունեցանք մեծ թիւով հիւրեր, Վիէթնամի պետական պաշտօնատարներ, նաեւ՝ զբօսաշրջութեան եւ պիզնէսի շրջանակներէն, Viet Jet airlines-ի բարձրաստիճան պաշտօնէայ մը, եւ բազմաթիւ ներկայացուցիչներ տարբեր-տարբեր հիւպատոսարաններէն:



Մշակութային երեկոն շատ յաջող էր եւ կարողացանք Հայ մշակոյթը ներկայացնել իւրայատուկ ձեւով:

Ձեռնարկի աւարտին հայկական Քոնէաքը առատօրէն հրամցուեցաւ, նուիրուած Վիէթնամ բնակող Հայու մը կողմէ: Ունէինք նաեւ համադրամ հայկական ուտեստներ 200-է աւելի հիւրերու համար. ի դէպ, հայկական ճաշարան մը գոյութիւն ունի ՅՕՇԻՄին քաղաքին մէջ՝ Արարատ, որուն տէրերը նուիրած էին բոլոր ուտեստները եւ կատարած էին բոլոր կարգադրութիւնները:

Եզրափակելէ ետք ձեռնարկը, Գօգոն տեղեկացուց որ Հոլանտայի հիւպատոսը իր հիացմունքը արտայայտած էր եւ ըսած որ այսպիսի ձեռնարկ տեղի չէր ունեցած Վիէթնամի մէջ եւ թէ Գօգոն նշաձողը այնքան բարձրացուցած էր, որուն հետ մրցիլը շատ դժուար պիտի ըլլար:

Յիշարժան, բացառիկ երեկոյ մըն էր:

Շաբաթավերջի ձեռնարկները՝ Պատարագ, Հիւպատոսութեան օրհնութիւն, եւ մշակութային երեկոն մեծ տպաւորութիւն թողուցին մեծ թիւով Վիէթնամցի հիւրերուն վրայ, որոնք տեսան Հայաստանի եւ հայութեան իւրայատկութիւնը:

Վարագոյրին ետեւ մեծ աշխատանք տարուեցաւ, որոնց կարգին՝ աշխատիլ Վիէթնամցի բարձրաստիճան անձանց հետ, կառավարական արտօնութիւն ապահովել, խորհրդատուներու հետ աշխատանք ելլն: Գօգոն անխոնջ աշխատանք տարաւ:

Գօգոն վստահ եմ որ աւելի ն պիտի կարենայ ընել յառաջիկայ տարիներուն: Մեծապէս շնորհակալ եմ նաեւ հիւպատոսարանի պաշտօնատար Պրն Վանին իր տարած հոյակապ գործունէութեան, յատկապէս՝ Վիէթնամի կառավարական անձանց հետ տարած կարեւոր յարաբերական աշխատանքին համար:

Հայաստանի Պատուոյ Հիւպատոս Գօգոն, վստահաբար պիտի կարենայ զարգացնել Հայ Վիէթնամեան յարաբերութիւնները. այսպիսի ժիր եւ նպատակասլաց Հայ հիւպատոսներու թիւը պէտք է աւելնայ Ասիական Խաղաղականի շրջանին մէջ: Ամենայն բարիք կը մաղթենք իրեն ապագայի իր գործունէութեան մէջ:

Փարոս: Կրնա՞ք ծանօթացնել Պրն Պատուոյ Հիւպատոսը: Մշակութային թէ հոգեւոր եւ այլ բնագաւառներէ ներս ի՞նչ ծրագիրներ ունի Պարոն Հիւպատոսը Վիէթնամի մէջ:

Յակոբ Պողոսեան: Պրն Գօգօ Օհաննէսեանը ծնած է Սիստնի: Մասնակցած է ՀՄԸՄ-ի սկաւառակաւ շարժումին, աշակերտած է հայկական շաբաթօրեայ վարժարանի, համալսարանական ուսումը կատարած է Մաքուարի Համալսարանին մէջ: Աշխատած է անշարժ գոյքի ասպարեզին մէջ: Գործած է Հոնկ Բոնկի մէջ եւ 15 տարիէ ի վեր կը բնակի ՅՕՇԻՄին քաղաքին մէջ:



Փարոս: Ձեր պատգամը մեր ընթերցողներուն:

Յակոբ Պողոսեան: Ինչպէս ըսի մշակոյթը կը միացնէ մեզ բոլորս:

Այսօր երկսայրի դժուարութիւններու առջեւ կը գտնուի մշակոյթը: Անգլերէնի մէջ կայ ասացուածք մը՝ competitive advantage, սակայն կը կարծեմ թէ հայկական մշակոյթը կարելի է որակել superior competitive



միջոցառումներ կը կազմակերպուին գալիք տարիներուն:

advantage, մեր պարէն սկսեալ մինչեւ երաժշտութիւն, երգ, արուեստ, նկարչութիւն, գորգագործութիւն եւ ասեղնագործ:

Յուսով եմ որ յառաջիկայ տարիներուն այլ անձինք կը յաջողին Հայ մշակոյթը ներկայացնել այլ Ասիական քաղաքներու մէջ: Իսկ մեր սիրելի Հայ Առաքելական Եկեղեցին կրնայ կազմակերպել հայկական հոգեւոր արարողութիւններ Ասիական քաղաքներու մէջ:

Կրնամ հաստատել որ Հայ եկեղեցին եւ Հայ մշակոյթը ձեռք ձեռքի կը քայլեն, այդ կը ներկայացնէ մեր նկարագիրը: Կը յուսամ որ իւրայատուկ

Հարցազրոյցը վարեց Նշան Պասմաճեան

Մի քանի ամիս առաջ տեղեկացուցած էինք Փարոսի մէջ Դոկտ Ահմէտ Սատեղիի Առաջնորդարան այցելութեան մասին:

19 Մայիսին դժբախտ արկածով մահացան Պարսկաստանի նախագահ Սէլէտ Իպրահիմ Բախիւն եւ Արտգործ նախարար Հօսէյն Ամիրասպտոլահեանը:

Այս տխուր առիթներով, Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արք Նաճարեան յանուն թեմական խորհուրդին, եկեղեցական դասին եւ համայնքի զաւակներուն ուղարկեց ցաւակցագիր մը, գոր կը ներկայացնենք ստորեւ:

Յիշատակը անթառամ մնայ Հայ ազգին այս երկու հանգուցեալ բարեկամներուն:

His Excellency Dr Ahmed Sadeghi
Ambassador of the Islamic Republic of Iran
25 Culgoa Cct
O'malley ACT 2606

“The Lord is a stronghold for the oppressed, a stronghold in times of trouble” (Psalm 9:9)

Your Excellency,

On behalf of the Armenian Diocese of Australia and New Zealand, the Diocesan Council, the clergy and the Austral-Armenian community we come to grieve with you for the loss of President Sayyid Ebrahim Raisi and the Foreign Minister of Iran Hosein Amirabdollahian and those who accompanied them in the helicopter crash occurred on 19th May.

We pray for the souls of the demised. May The Almighty console their loved ones, lighten the bereft of the Government of Iran and console them with the promise of God.

With Prayers,

Archbishop Haigazoun Najarian
Primate
23 May 2024

Լուրեր Ծուխերէն

ՄԵԼՊՈՒՐՆ

Սուրբ Աստուածածին Եկեղեցի

Մայիս 20-ին ՀԲԸՄ-ի սրահին մէջ տեղի ունեցաւ «Գիտութիւն և Հաւատք» խորագրով բանախօսութեան առաջին հանդիպումը: Հոգեբոյժ Սելին Քելքեշը խօսեցաւ մարդու հոգեկան առողջութեան, հիւանդութիւններու և բուժման մեթոտներու մասին: Արժանապատիւ Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեան ներկայացուց, թէ ինչպէս հաւատքը կ'անդրադառնայ մարդու հոգևոր առողջութեան և բանականութեան վրայ: Բանախօսութեան ասարտին տրուեցան հարցեր և տեղի ունեցաւ բուռն քննարկում: «Հաւատք և Գիտութիւն» խորագրով յաջորդ հանդիպումը կը նախատեսուի Յունիս 17-ին նոյնպէս ՀԲԸՄ-ի սրահին մէջ:



Մայիս 25-ին կատարուեցաւ ուխտագնացութիւն Քրեքիբեռնի Սուրբ Յակոբ Ասորական Եկեղեցի: Սուրբ Աստուածածին Եկեղեցիէն ուխտաւորները գացին Ասորական Սուրբ Յակոբ Եկեղեցի:

Հոգևոր Հովիւ Տ. Խաչեր քահանայ Յարութիւնեանի, Դպրաց Դասի և Սարկաւագներու ուղեկցութեամբ: Սուրբ Յակոբ Եկեղեցոյ մէջ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ, իսկ Պատարագի վերջաւորութեան ներկաները մասնակցեցան Քրեքիբեռնի հայ ընտանիքներու կողմէ պատրաստուած հիւրասիրութեան Եկեղեցոյ կից սրահին մէջ: Ուխտագնացութիւնը անցաւ շատ ջերմ ու խանդավառ մթնոլորտի մէջ, որուն մասնակցեցան Քրեքիբեռնի և յարակից շրջաններու հայորդիներ:



Տէր Խաչեր Քահանայ Յարութիւնեան



Ուէնթուրթովիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

Կիր., 5 Մայիս – Արժանապատիւ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան, ի բացակայութեան նուիրատուին, օրհնեց եկեղեցոյ կնքահայր Տիկին Արշալոյս Թահմիզեանը, որ եկեղեցոյ նուիրած էր Շուրջառ մը, Սաղաւարտ մը եւ Բազպաններ:

Գշ., 9 Մայիս – Առաւօտուն, Համբարձման Տօնին առթիւ Տէր Միւռն պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց: Երեկոյեան ժամը 7-ին, ՀՕՄ Արագ մասնաճիւղի վարչութեան հրաւերին ընդառաջելով, Արարատ սկաւուտական սրահին մէջ, Տէր Միւռն դասախօսեց մասնաճիւղի անդամական ժողովին ընթացքին, նիւթ ունենալով Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Համբարձումը:



Ուրբ., 10 Մայիս – Տէր Միւռն մասնակցեցաւ Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ երիտասարդական միութեան կազմակերպած «Խաղերու Երեկոյ»ին: Ձեռնարկին առաջին մասը յատկացուեցաւ Սուրբ Գրոց սերտողութեան, որմէ ետք ի գործ դրուեցաւ ընկերային յայտագիր մը:

Կիր., 12 Մայիս – Երկրորդ Ծաղկազարդին առաւօտեան ժամերգութենէն ետք Տէր Միւռն պատարագեց եւ քարոզեց: Ան նաեւ ընթերցեց 10 Մայիս թուակիր Սրբազան հօր հրապարակած մամլոյ հաղորդագրութիւնը:

Շբ., 18 Մայիս – Ընկերակցութեամբ Ծխական Խորհուրդի առենապետուհին, Ծխականի եւ Երիտասարդաց միութեան ներկայացուցիչներ Օրիորդներ Նինա Աւետիսեանի եւ Մարալ Գեորգի, Մելայուրնի մէջ Տէր Միւռն մասնակցեցաւ Թեմական Պատգամաւորական ժողովին:



Կիր., 19 Մայիս – Մինչ Տէր Միւռն եւ Թեմական Պատգամաւորական ժողովին մասնակիցները կը մասնակցէին Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուող Պատարագին, Բարեշնորհ Յովիկ սարկաւազ Գլնճեան, ընկերակցութեամբ Խորանին ծառայողներուն, դպրաց երգչախումբին եւ խմբավարին, սօնախմբեցին Հոգեգալստեան Տօնը Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ: Այս օրը, Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտները վայելեցին խաղերու յայտագիրը եկեղեցւոյ ետեւի հողատարածքին մէջ, ճաշեցին միասին եւ որպէս գնահատանք 12 Մայիսին Մայրերու Օրուան տօնակատարութեան անոնց տարած անսակարկ ծառայական աշխատանքին՝ պատմութիւններու գրքոյկներ ստացան որպէս նուէր:



Կիր., 26 Մայիս – Տէր Միւռն պատարագեց եւ քարոզեց: Հաւատացեալները իրենց ստուները վերադարձան գոհունակ սրտով:

Մարի Բլէր Թորոսեան



ԼՈՒՐԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՅՂ «ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻԸ

Մայիս 4-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունեց ՀՅՂ «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութեան անդամները, ուղեկցութեամբ ՀՅՂ Գերագոյն մարմնի անդամ Գեղամ Մանուկեանի: Պարոն Մանուկեան Վեհափառ Հայրապետին տեղեկութիւններ փոխանցեց միութեան ստեղծման պատմութեան և ներկայ գործունէութեան մասին: Նորին Սրբութիւնը, ողջունելով միութեան անդամ երիտասարդները, իր գնահատանքը յայտնեց անոնց հայրենանուէր իրագործումներուն համար: Ան ըսաւ, որ իւրաքանչիւր հայորդիի հայրենասիրութեամբ ու քաջարի ոգիով պէտք է իմաստատրուի նահատակ մեր զաւակներու զոհաբերութիւնը, որպէսզի հնարաւոր ըլլայ կերտել անվտանգ, բարօր և առաջընթաց հայրենիք: Նորին Սրբութիւնը վստահութիւն յայտնեց, որ առ Աստուած ամուր հաւատքի, արիութեան և միասնականութեան շնորհիւ հայ ժողովուրդը կը կարողանայ յաղթահարել հայրենիքին առջև ծառայած մարտահրաւերներն ու փորձութիւնները: Ան յորդորեց ըլլալ միաբան, ամուր կառչած ազգային արժէքներուն, ներգրաւուիլ հոգևոր-եկեղեցական կեանքին մէջ, ամուր պահել սերն ու նախանձախնդրութիւնը հայրենիքի նկատմամբ: Աւարտին Հայրապետը պատասխանեց երիտասարդներու հարցերուն:



ՄԱՅԻՍ 5-ԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՇՈՒԷՏԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՎԵՍՏԵՐԻՄԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՔԱՅԷԼ ՍՈԿՐԷՆԸ

Եպիսկոպոսը ընդգծեց, որ Հայաստան ժամանած է ծանօթանալու հայրենագրկուած արցախահայերու ընկերային կացութեան և իր նպաստը բերելու առկայ խնդիրներու յաղթահարման:

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Տաւուշի մարզից տարածքները Ադրբեջանին միակողմանիօրէն յանձնելու իրողութեան և բանակ-
ցութիւնների մէջ ՀՀ իշխանութիւնների որդեգրած անընդունելի դիրքորոշումների առնչութեամբ Մայր
Աթոռ Սուրբ Էջմիածինը վերահաստատում է նախընթաց արտայայտուած իր դիրքորոշումը: Խիստ
վտանգաւոր ենք համարում առանց համապարփակ ու երաշխաւորուած լուծումների Տաւուշի
սահմանամերձ շրջանում սահմանագատման ու սահմանագծման անուան ներքոյ իրականացուող
գործողութիւնները, որոնք նոր սպառնալիքներ են առաջացնում մեր ժողովրդի համար: Ստեղծուած
կացութիւնն արդարացի ընդվզում է առաջ բերել աշխարհասփիւռ հայութեան և, մասնաւորապէս,
Տաւուշի սահմանամերձ համայնքների բնակիչների շրջանում՝ պատճառ դառնալով «Տաւուշը յանուն
հայրենիքի» քաղաքացիական շարժման սկզբնաւորման: Առկայ գոյաբանական մարտահրաւերներին
յանդիման հոգևոր սպասաւորները, տուեալ դէպքում՝ Տաւուշի թեմի եկեղեցականները՝ թեմակալ
առաջնորդի գլխաւորութեամբ, հաւատարիմ իրենց հոգևոր առաքելութեանն ու կոչմանը, չեն կարող
անտարբեր մնալ ու անհաղորդ՝ իրենց խնամքին յանձնուած ժողովրդի անհանգստութիւններին ու
կարիքներին: Մեր ժողովրդի զաւակներին յորդորում ենք արդար մտահոգութիւններն ու անհանգստ-
ութիւններն արտայայտել բացառաբար խաղաղ ճանապարհներով և դրսևորել հանդարտութիւն ու
զսպուածութիւն՝ զերծ մնալով հակաօրինական գործողութիւններից: Հասարակական կարգի պահպա-
նութեան համար պատասխանատու ծառայութիւններից ակնկալում ենք բացառապէս օրէնսդրութեանը
խիստ համապատասխան գործելաձև: Կոչ ենք անում նաև իշխանութիւններին՝ անսալ ժողովրդի



հիմնաւոր պահանջներին և խաղաղ-
ութեանն ուղղուած գործընթացներում
առաջնորդուել այնպիսի մօտեցումներով,
որոնք չեն մեծացնի անվտանգային ըս-
պառնալիքները՝ խորացնելով մեր հան-
րութեան մէջ անպաշտպանուածութեան
և անորոշութեան զգացումները: Կարևոր-
ելով սահմանագատման ու սահմանագծ-
ման գործընթացները՝ միաժամանակ
հաստատում ենք, որ այդ աշխատանք-
ները պէտք է իրականացուեն պատերազ-
մի բացառման, Հայաստանից բռնագա-
վթուած տարածքների վերադարձման և
բնակավայրերի անվտանգ ու անխաթար
կեանքի ապահովման երաշխիքների
ատկայութեան պայմաններում: Ազգային մեր արժանապատուութիւնը, հայրենի պետութեան և սրբազան
արժէքների հանդէպ նախանձախնդրութիւնն ու հաւատարմութիւնը պէտք չէ տեղի տան անյուսութեան,
անհանդուրժողութեան և երկչոտութեան, թշնամանքի և ատելութեան առջև: Եկեղեցին, չունենալով
քաղաքական իշխանութեան հաւակնութիւններ, պիտի շարունակի պատմական պատասխանա-
տուութեան գիտակցութեամբ ջանքեր ներդնել յանուն հայրենիքի և պետականութեան զօրացման, մեր
ժողովրդի ինքնութեան ու իրաւունքների պաշտպանութեան, ազգային կեանքում միասնականութեան ու
եղբայրսիրութեան ամրապնդման՝ նպաստելով տարածաշրջանում խաղաղութեան հաստատմանն ու
ամրապնդմանը: Մեր աղօթքն է, որ Երկնաւոր Տէրը խաղաղութեան մէջ պահի մեր երկիրը և մեր
ժողովրդի կեանքից ներս զօրացնի սիրոյ, համերաշխութեան ու միաբանութեան ոգին: Ամէն

**ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ**



Մայիս 9-ին՝ Յաղթանակի ու խաղաղու թեան տօնին, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց մեր Տէր Յիսուս Քրիստոսի Համբարձման տօնը, որուն ընթացքին կը յիշատակուի նաև 1441 թուականին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Աթոռը Միս քաղաքէն Սուրբ Էջմիածին փոխադրման պատմական օրը: Վեհափառ Պատարագի սրբազան արարողութեան մասնակցեցաւ Սուրբ Գայանէ վանքին մէջ: Պատարագիչ՝ Գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Յովհաննիսեան: Վեհափառ Հօր պատգամը.

«Միրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, Յաղթական անցեալի ներշնչանքով և լուսաւոր ապագայի յոյսով, բայց նաև ծանր զգացումներով ենք այսօր դիմաւորում Յաղթանակի և խաղաղութեան տօնը, տօնը Հայրենական մեծ պատերազմում յաղթանակի, Շուշիի ազատագրման և Արցախի պաշտպանութեան բանակի ստեղծման տարեդարձի: Այս տարի խորհրդանշական գուճադիպութեամբ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին տօնախմբում է նաև մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի Համբարձումը և Հայրապետական Աթոռի Սուրբ Էջմիածնում վերահաստատուելու յիշատակի օրը: Ազգային, պետական ու եկեղեցական կարևորագոյն այս տօների համընկնումով Մայիսի 9-ը ամբողջացնում է խորհուրդը յաղթանակի: Այսօր մեր երկիրն ու ժողովուրդը դիմագրաւում են գոյաբանական ծանրագոյն փորձութիւններ: Անհուն զրկանքների ու զոհողութիւնների գնով ազատագրուած Արցախը բռնազաւթուած է ու հայաթափուած, մեր սրբավայրերն ու շիրիմները՝ լքուած ու աւերակուած: Վտանգուած են Հայաստանի սահմանները, և սպառնալիքների տակ հայրենաբնակ մեր ժողովրդի կեանքը, կորսուած է մեր անդորրը, և խոցոտուած՝ մեր ազգային արժանապատուութիւնը: Յաւալի կորուստների և դառն պարտութիւնների մէջ մենք վերստին դառնում ենք դէպի Կեանքի Աղբիւրը, դէպի Ամենախնամն Աստուած, որ հազարամեակների փորձութիւնների ու մաքառումների, արհաւիրքների ու աղէտների մէջ կեանքի ու յարատուութեան շնորհով օրհնեց մեզ և ողբշնչեց՝ ասելով.



«Քաջալերուեցէք, որովհետև Ես յաղթեցի աշխարհին» (Յովհ. 16.33): Մենք ժառանգներն ենք մի ժողովրդի, որ մահուան ու տառապանքների դէմ գօտեմարտում երբեք չկորցրեց իր հաւատն առ Աստուած, պահեց հաւատարմութիւնը իր հոգևոր-ազգային արժէքներին և չհրաժարուեց իր ինքնութիւնից: Մենք հետնորդներն ենք մեր հերոս նախնեաց, որոնց փառապանծ գործերով հզօրացել ու պայծառացել է ազգն ու հայրենիքը, դրպրութիւնը, գիտութիւնն ու մշակոյթը: Հայրենի հողը շէնացնելու, հայոց պետականութիւնը վերականգնելու նուիրական տեսիլքը վառ պահելու համար մեր հայրերը 1441

թուականին Սսից Սուրբ Էջմիածին փոխադրեցին Հայոց Հայրապետական Աթոռը:



Քրիստոսահիմն Սուրբ Էջմիածինը համայն հայութեան հոգևոր տունն է, հայոց անկախ պետականութեան կերտման դարբնոցը, մեր ժողովրդի յաղթանակների ու յարատևութեան խորհրդանիշը և ազգային մեր անաղարտ ինքնութեան ջահակիրն ու պահապանը: Սուրբ Էջմիածնի տեսիլքը այսօր ևս շարունակում է մնալ հոգևոր ներուժն ու ակունքը յաղթանակների: Յաղթանակ՝ փորձությունների դէմ, յաղթանակ՝ ինքնութեան ու արժանապատուութեան համար մղուող պայքարում, յաղթանակ՝ առ հայրենին ու առ սրբազան արժէքները հաւատարմութեան: Մեր յաղթանակները չունեն թշնամանքի ու

ատելութեան կնիք, այլոց արժանապատուութիւնը նսեմացնելու, սրբութիւնները ոտնահարելու և ինքնութիւնը ոչնչացնելու չարորակ նկրտում: Մեր յաղթանակները ամրապնդում են կամքն ու վճռականութիւնը՝ հասնելու խաղաղութեան, անվտանգ պահելու մեր ժողովրդին, վերահաստատելու համազգային սէրն ու համերաշխութիւնը: Միբլի բարեպաշտ ժողովուրդ, Մեր սիրտը յուզում են նոյն մտահոգութիւններն ու ցաւերը, որոնք այլեկոծում են հոգիները հայրենիքի ծանր մարտահրաւերներով անհանգստացած աշխարհասփիւռ մեր զաւակների: Այդ տագնապներով են նաև այս օրերին իրենց ընդվզումի ձայնը բարձրացնում «Տաւուշը յանուն հայրենիքի» քաղաքացիական շարժման մասնակիցները: Մեր մաղթանքն է, որ շուտափոյթ հանգուցալուծում գտնեն առկայ հիմնախնդիրները, և մեր ժողովուրդը պատուով յաղթահարի մեզ պատուհասած արհաւիրքները: Արդ, յոյսով ու լուսատեսութեամբ զինուենք, չտկարանանք դժուարութիւնների առջև, յիշենք մեր նախնիների սխրանքները, թօթափենք վախի ու անտարբերութեան կործանարար զգացումները, լինենք միակուռ ու միաբան: Համախմբուենք հայոց անկախ պետականութեան լուսաւոր գաղափարի շուրջ՝ Աստծոյ օրհնութեամբ անկասելի դարձնելու մեր ժողովրդի ընթացքը դէպի նոր հորիզոնները մեր լուսաւոր գալիքի: Աղօթենք միասնաբար, որ Աստուած խաղաղութիւն պարզևի համայն աշխարհին, նոր կորուստներից ու աղէտներից հեռու պահի մեր հայրենիքն ու ազգը և Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքոյ շնորհի անվտանգ կեանք ու ստեղծարար յաջողութիւններ այսօր և միշտ. ամէն»:

**ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ
ԱՅՅԵԼԵՑԻՆ «ՅԱՂԹԱՆԱԿ» ԶԲՕՍԱՅԳԻ**

Մայիս 9-ին՝ Յաղթանակի ու խաղաղութեան տօնին առիթով, Մայր Աթոռի միաբաններն ու ՀՀ ԶՈւ հոգևոր առաջնորդութեան գնդերէցները այցելեցին «Յաղթանակ» զբոսայգիի հուշահամալիր, ուր աղօթք բարձրացուցին յաղթանակ կերտողներու հոգիներու հանգստութեան համար:





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԸՆԴՈՒՆԵՑ
ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԻՆՍՊՐՈՒՔԻ
ԹԵՄԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ**

Մայիս 12-ին, Վեհափառը ընդունեց Բնասարուքի թեմին (Աւստրիա) առաջնորդ Հերման եպիսկոպոս Գլեթթերի գլխավորած պատուիրակութիւնը, որուն կազմին մէջ էին «Քարիթաս Աւստրիա» և «Հայկական Քարիթաս» կազմակերպութիւններու ներկայացուցիչները: Վեհափառը իր գնահատանքը յայտնեց կազմակերպութեան Հայաստանին և հայ ժողովուրդին ցուցաբերուող աջակցութեան համար: Ան նաև անդրադարձաւ մեր եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցւոյ եղբայրական փոխգործակցութեան: Հերման եպիսկոպոս յայտնեց որ իր Հայաստան այցի նպատակն է առաւել զօրացնել «Քարիթաս Աւստրիա» և «Հայկական Քարիթաս» կազմակերպութիւններու համագործակցութիւնը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՆՈՒԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՐԵՐԱՐ ՆՈՒՊԱՐ ԱՏԷՅԵԱՆԸ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԱՆՈՒԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՐԵՐԱՐ ՆՈՒՊԱՐ
ԱՏԷՅԵԱՆԸ**

Մայիս 16-ին Վեհափառը ընդունեց «Ապագայ Հայկականը» շարժման նախաձեռնող, «Ավորդա» մարդասիրական նախաձեռնութեան համահիմնադիր, անուանի գիտնական և ազգային բարերար տիար Նուպար Աֆէյեանը: Հանդիպման ներկայ էր Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանը: Նորին Սրբութիւնը բարձրօրէն գնահատեց Աֆէյեանին Հայաստանին ու արցախա-հայութեան ցուցաբերած շարունակական զօրակցութիւնը: Հանդիպման Ամենայն Հայոց Կաթողիկոսը և տիար Աֆէյեան անդրադարձ կատարեցին Հայաստանի մէջ տեղ գտած զարգացումներուն, ինչպէս նաև ամէն տեսակի բայց մանաւանդ անվտանգային մարտահրաւերներուն: Անոնք անդրադարձան նաև Հայաստան-Սփիւռք կապին, Սփիւռքի առջև ծառայած մարտահրաւերներուն եւ սփիւռքեան ծրագիրներուն:



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ՑԱԽԱԿՑԱԳԻՐ ՅՂԵՑ ԻՐԱՆԻ ՀՈԳԵԻՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ**



Մայիս 20-ին Վեհափառը ցուակցական նամակ յղեց Իրանի Իսլամական յեղափոխութեան առաջնորդ Այաթոլլա Մեյեդ Ալի Հոսէյնի Խամենէիին՝ ուղղաթիռի վթարի հետևանքով Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Մեյիդ Իբրահիմ Ռախիփ, ԱԳ նախարար Հոսէյն Ամիր Արդոլլահյանի և ուղեկցող պաշտօնատար անձանց ողբերգական մահուան առիթով:

Նորին Սրբութիւնը, յանուն Գերագոյն հոգևոր խորհուրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութեան, վշտակցութիւն յայտնեց զոհերու սգակիր ընտանիքներուն և Իրանի ժողովուրդին՝ հայցելով, որ Բարձրեալը զօրաւիզ ըլլայ Իրանի Իսլամական Հանրապետութեան յաղթահարելու դժուարին փորձութիւնը:




**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱԼԼԷԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ**

Մայիս 21-ին, Վեհափառը ընդունեց Գերմանիոյ Հալլէ քաղաքի Մարթին Լուտեր համալսարանի աստուածաբանութեան բաժնի փրոֆեսորներու պատուիրակութիւնը և ուսանողները, գլխաւորութեամբ Գերմանիոյ Աւետարանական Եկեղեցւոյ Արևելեան և Հարաւային Եւրոպայի բաժանմունքի տնօրէն փրոֆեսոր Մարթին Իլլերթի: Ներկայ էին նաև Գերմանիոյ Հայոց թեմի առաջնորդ

Գերաշնորհ Ս. Սերովբէ եպիսկոպոս Իսախանեանը, Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրէն Գերաշնորհ Ս. Սուշեղ եպիսկոպոս Բարայեանը և Գեորգեան Հոգևոր ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Ս. Շահէ ծայրագոյն վարդապետ Անանեանը: Պատուիրակութեան այցին նպատակն էր կրթական ոլորտի մէջ խորացնել համագործակցութիւնը ՀՀ ԲՈՒՀ-երու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգեան Հոգևոր ճեմարանի հետ: Վեհափառը բարձրօրէն գնահատեց նախանշուող ծրագրերն ու ձևաւորուող գործակցութիւնը: Ան ընդգծեց, որ Սուրբ Էջմիածնի միաբանները իրենց բարձրագոյն կրթութիւնը կը շարունակեն տարբեր երկիրներու նշանաւոր աստուածաբանական համալսարաններու և Քոյր Եկեղեցիներու հոգևոր ուսումնական հաստատութիւններու մէջ, որը էապէս կը նպաստէ փոխճանաչողութեան և միջ-եկեղեցական կապերու առաւել սերտացման: Ան գոհունակութիւն յայտնեց Գերմանիոյ հայոց թեմի և այնտեղ գործող տարբեր քրիստոնէական յարանուանութեանց միջև ջերմ փոխգործակցութեան առիթով:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՖՐԱՆՍԱՀԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ**



Մայիս 22-ին Վեհափառը ընդունեց ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ և Հայ դատի Յանձնախումբերու Կեդրոնական Խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեանը և Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի համանախագահ, ՀՅԴ Բիւրոյի անդամ Մուրատ Փափագեանի գլխաւորած պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին նաև Ֆրանսայի Սենատի պատգամաւորներ: Քննարկուեցան առկայ մարտահրաւերները: Հայոց Հովուապետը անդրադարձ կատարեց Հայաստանի և արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան անհրաժեշտութեան և այդ ուղղութեամբ Ֆրանսայի կողմէ ներդրուող ջանքերուն եւ Ֆրանսայի Սենատի շարունակական զօրակցութեան:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՊԻՄԿՈՂՈՍՆԵՐՈՒ և ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԷՋ

Մայիս 23-ին, նախագահությամբ Վեհափառ հոր, տեղի ունեցավ հայաստանեան եպիսկոպոսներու և թեմակալ առաջնորդներու ժողով: Օրակարգի նիւթերը կը վերաբերէին հայրենիքի առջև ծառայած մարտահրաւիրներուն, հասարակութիւնը յուզող հիմնախնդիրներուն և Եկեղեցոյ առաքելութեան առնչուած հարցերուն: Ժողովը հրապարակեց հետեւեալ յայտարարութիւնը.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀ իշխանութեան տարբեր ներկայացուցիչներ, այդ թւում և վարչապետը, Տաւուշում սահմանագատման ու սահմանագծման անուան ներքոյ կատարուող տարածքային միակողմանի զիջումների դէմ հանրային ընդվզման այս օրերին, վերստին սկսել են թիրախաւորել Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հրապարակ նետելով տարատեսակ կեղծ յայտարարութիւններ և ճշմարտագուրկ տեսութիւններ՝ առնչուած Եկեղեցու պատմական առաքելութեանն ու ներկայ գործունէութեանը: Առաւել քան զարմանալի է, որ մերկապարանոց մեղադրանքներ են հնչեցում Եկեղեցու կողմից հարկեր չվճարելու առնչութեամբ, երբ պաշտօնական վիճակագրութիւնները ուղղակի փաստում են ՀՀ օրէնքով սահմանուած հարկային պարտաւորութիւնների կատարման մասին: Յատկապէս դատապարտելի է, երբ կառավարութեան ղեկավարը անհիմն մեղսագրումներով և անսքող դիտաւորութեամբ Հայ Եկեղեցուն ամբաստանում է ինչպէս անցեալում, այնպէս և այսօր «ազդեցութեան գործակալ» լինելու մէջ: Յաւ ենք արտայայտում, որ գործող իշխանութիւնները Եկեղեցի-պետութիւն յարաբերութիւններում առկայ խնդիրներն արծարծում են անվայելուչ իրենց հանգամանքին, նաև սպառնալիքների, ճնշումների և ապատեղեկատուութեան գործիքակազմերի օգտագործմամբ: Հարկ է, որ ՀՀ իշխանութեան ներկայացուցիչները ազգի և հայրենիքի առջև իրենց պատասխանատուութեան գիտակցութեամբ անդրադարձան Եկեղեցու պատմական հայրենաշէն ու ազգապահպան դերակատարութեանը, ինչն ամրագրուած է նաև ՀՀ Սահմանադրութեամբ, և վերատեսութեան ենթարկեն որդեգրած քաղաքականութիւնը: Աղօթում ենք, որ Աստուած խաղաղութիւն պարգևի մեր հայրենիքին, բարօրութիւն ու ապահովութիւն մեր ժողովրդին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԲՆԱԿԱՆ ԱՂԷՏԻ ՀԵՏԵԱՆՔՈՎ ԶՈՂ ԳԱՑԱԾ ՀԱՅՈՐԴՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Մայիս 27-ին, Վեհափառի հանդիսապետութեամբ, Մայր Աթոռի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ և Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանին մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ Լոռիի և Տաւուշի մարզերուն մէջ բնական աղէտի հետևանքով զոհ զացած հայորդիներու համար:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՏՕՒՆ ԱՌԻԹՈՎ**

Համայն հայութեան հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում աշխարհասփիւռ մեր ժողովրդին՝ Հանրապետութեան տօնի առիթով: Մայիսեան հերոսամարտերի պատմական իրադարձութիւնները անկիւնաքարային նշանակութիւն ունեցան հայոց պետականութեան վերականգնման՝ Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծման և մեր ազգային կեանքի վերագարթօնքի գործում: Հայոց Յեղասպանութեան սուկայի ողբերգութիւնը վերապրած մեր ժողովուրդը կենաց ու մահու պայքարի ելաւ և կերտեց իր փառապանծ յաղթանակները: Այս օրերին, երբ անվտանգային լրջագոյն սպառնալիքների և գոյարանական հիմնախնդիրների առջև ենք, հրամայական է, որ միասնական, աննկուն ու հաստատակամ լինենք՝ ընդդէմ մեր ազգային կեանքը փոթորկող ներքին և արտաքին մարտահրաւերների: Միրելիներ, Հանրապետութեան տօնի առիթով Հայրապետիս մաղթանքն է, որ յանուն հայրենական մեր կեանքում խաղաղութեան հաստատման և արժանապատիւ գոյրնթացի, նպատակասլաց յանձնառութեամբ և առ հայրենին սիրով ձեռնամուխ լինենք մեզ պատուհասած աղէտների ու փորձութիւնների յաղթահարմանը և հզօր ու անվտանգ մեր պետութեան կերտմանը: Վանենք մեզանից կործանարար անտարբերութիւնը, փարատենք թշնամութեան ու աստելութեան մթնոլորտը, որպէսզի միասնականութեան յուսառատ ու զօրեղ ոգով հաստատենք մեր կեանքում ապահովութիւն և խաղաղութիւն: Աղօթում ենք, որ Երկնաւոր Տէրը պահապան և օգնական լինի մեր ժողովրդին՝ ամուր պահելու աստուածապարզ և մեր ազատութիւնն ու անկախ պետականութիւնը և համազգային ներուժով բարօր դարձնէ մեր նուիրական հայրենիքը:



**ՏՕՆԱԽՄԲՈՒԵՑԱԻ ՍՈՒՐԲ
ԳԱՅԱՆԵԱՆՑ ԿՈՅՍԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ**

Մայիս 28-ին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տօնեց Սուրբ Գայանեանց կոյսերու յիշատակը, որը այս տարի համընկեցաւ Հանրապետութեան տօնին: Մայիսի 27-էն Յունիսի 2-ը Հայոց Եկեղեցին կը տօնախմբէ Արարատեան շարաթը: Ան կը յատկանշուի Հռիփսիմեանց և Գայանեանց կոյսերու, Յովհաննէս Կարապետի յիշատակութեամբ, ինչպէս նաև Լուսաւորչի Վիրապէն ելլելու և Կաթողիկէ սուրբ Էջմիածնի տօներով:

Բերկրառատ տօնին առիթով, առաւօտեան Վեհարանէն եկեղեցականներու հանդիսաւոր թափօրը առաջնորդուեցաւ դէպի Սուրբ Գայանէ վանք: Սուրբ Գայանէ վանքին առջև թափօրը դիմաւորեցին Մայր Աթոռի Վանորէից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանեանը, վանքի հոգևոր սպասաւորներն ու բազմաթիւ հաւատաւոր հայորդիներ: Մատուցուեցաւ Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչ՝ Սուրբ Գայանէ վանքի վանահայր Հոգեշնորհ Տ. Մատթէոս վարդապետ Պօղոսեան: Իր քարոզին մէջ Հայր Սուրբը, ընդգծեց, որ կոյսերը իրենց անբասիր մաքրութեամբ, անսասան հաւատքով, առաքինի վարքով, քաջութեամբ ու համարձակութեամբ, առ Աստուած տոգորուած սիրով դարձան Տիրոջ երկնաւոր արքայութեան ընտրեալները: «Այսօր Մայիսի 28-ն է, մեր պատմութեան հերոսական էջերից մէկը և գեղեցիկ գուզադիպութեամբ Գայանեանց կոյսերի տօնը համընկել է Մարդարապատի հերոսամարտի յաղթական օրուայ հետ: Այսօր էլ ծանր փորձութիւնների առաջ է կանգնած մեր երկիրը: Մակայն վստահ ենք, որ քրիստոնէական մեր տիրաւանդ հաւատքով, Տիրոջ զօրակցութեամբ յաղթահարելու ենք այս դժուարին ժամանակները ևս», - ըսաւ Հայր Մատթէոս: Ապա կատարուեցաւ Հանրապետական մաղթանք:

DIOCESAN NEWS


ONLINE LECTURE GENERAL SECRETARY OF THE NATIONAL COUNCIL OF CHURCHES IN AUSTRALIA (NCCA)

Elizabeth Stone spoke online with the Armenian Diocese and friends on Wednesday **1 May 2024** in the monthly lecture.

Elizabeth, who is known as Liz, is a Roman Catholic and has been in the role of General Secretary since January 2018 and was made full-time from May 2020.

Liz reflected on the 30 years of the National Council of Churches in Australia when it was formed in 1994 to succeed the Australian Council of Churches established in 1948 soon after the formation of the World Council of Churches. The Armenian Apostolic Church has been a member of both Councils and Archbishop Aghan Baliozian was the founding President of NCCA from 1994-97.

There are currently 18 member national churches and Liz looked at the Basis or foundational statement of NCCA in light of John 17:20-23, Jesus' prayer for his disciples. Christian Unity is mentioned three times in Jesus' prayer. She noted that the prayer that his disciples 'may all be one' was both a gift and a task. So that when we talk about Christian Unity, from Jesus' prayer, we can see that it has its basis in a shared life in Christ; as a major source for witness to the world; and is expressed through common love, purpose and mission.



It was noted that unity was not the absence of conflict; it was not uniformity so that unity in diversity is what our Churches bring to our relationships, and it is not unanimity in terms of doctrines, sacraments, culture and traditions. Liz then took us through a key document of the NCCA that was adopted by member churches 20 years ago in 2004. This document called Australian Churches

Covenanting Together was to show how the Australian Churches might grow together in order to express more visibly the unity willed by Christ for his Church and to work together where we could in joining in common prayer with one another, intercede and care for one another, explore with one another our Christian convictions and their present application, explore opportunities for common mission and ministry, recognise the Sacrament of Baptism administered in each other's church.

In the lead up to the 11th National Forum of NCCA in June 2024 when the 30th anniversary of NCCA will be marked with our member churches, Liz reflected on the 2019 Strategic Roadmap that has guided the NCCA in the last period. The Roadmap has four pillars and related focus areas:

A Encouraging Relationships – communications and engagement (*Hebrews 10:24-25*)

B Connection & Fellowship – support and participation of members (*Matthew 18:20*)

C Witnessing Together – ecumenical advocacy (*Acts 1:8*)

D Enabling & Resourcing – council development (*2 Corinthians 9:8*).

The coming National Forum in June 2024 will be looking to how we are churches in unity in the current post-COVID context in Australia where there are both challenges and opportunities. The theme is 'Messages of Hope in a complex world. In discussions at the Forum where the keynote speaker will be the General Secretary of the World Council of Churches (WCC), Rev Prof Dr Jerry Pillay of South Africa, we will explore the ways hope can be made real and inspire positive change. We will name possible messages of hope, those that will add value to the life and work of churches and Christian communities in Australia.



In conclusion, Liz expressed the NCCA's thanks to God for the ecumenical commitment of the Armenian Apostolic Church in Australia, particularly noting Archbishop Aghan Baliozian, first NCCA President; His Eminence Archbishop Haigazoun Najarian; Ms Sonia Berberian, Member of NCCA Executive to 2016; Mr Stepan Kerkyasharian AO, member nominee for NCCA General Meetings; Dr Artin Jebejian, Board Director 2016-18 and Deacon Nishan Basmajian. Liz replied to all the questions asked. His Eminence Archbishop Najarian concluded the evening with his closing remarks and the closing prayers.

To watch the lecture please tap on the following link [Online Lecture: 30 YEARS OF THE NATIONAL COUNCIL OF CHURCHES IN AUSTRALIA 1 May 2024](#)

Thursday 2 May to Friday 10 May – Archbishop Najarian travelled to Ho Chi Minh City, Vietnam, to celebrate and bless the first Honorary Consulate of Ho Chi Minh City. For more details, read the interview conducted by Paros with Mr Hagop Boghossian (page 43).

Thursday 9 May – In the Egdarian Hall of the Holy Resurrection Church, with the blessing of His Eminence, a public gathering was held by the Central Committee of the ARF Australia and its companion associations, in support of the "Tavush for the Motherland" movement headed by His Eminence Archbishop Bagrat Galstanyan. On 4 May 2024, His Eminence Archbishop Bagrat Galstanyan and Armenians from Tavush region began to march from Tavush towards Yerevan and were joined along the way by thousands of Armenians and Armenian citizens belonging to Yezidi and other minorities.

A live broadcast was set up with Yerevan so that attendees were able to watch as those who were marching approached the end destination of the march in the city centre.

In the presence of Parish Pastors Reverend Fathers Avetis Hambarzumyan and Father Miuron Avedisian and 250 supporters, the young master of ceremonies, Hrant Boujikian, made the opening speech and after welcoming the attendees announced, "We have come here



to express our solidarity with our brothers and sisters who, thousands of kilometres away during this crisis, continue to fight against lies, against falsehood, for truth, for justice and for the Motherland".

On behalf of the Central Committee, Mr. Nerses Baliozian spoke. Referring to the "Iron Ladle" message of the Khrimian Hayrig and drawing a parallel between it and the "Tavush for the Motherland" movement, he said:



"Even today, the Armenian Church leads this struggle, the Armenian clergy is standing up once again and we are gathered here today to unconditionally support that struggle, because silence is now complicity... Today, the ARF, with its organisational structure, resolutely stands by the Armenian Apostolic Church and this struggle."

The final message was delivered by Reverend Father Avetis Hambarzumyan. He clearly explained that today the Armenian people were deceived by the government of the day, as a result of which Artsakh was confiscated and many thousands died. He reminded those gathered that the Armenian Church today stands by the Motherland and the Armenian people, something it has done for centuries at the cost of persecution and the martyrdom of thousands of clergymen. The Reverend Father wished that the "Tavush for the Motherland" movement would successfully achieve its goal.

The gathering ended with the closing prayer of Father Avetis and Father Miuron.

Friday 10 May – Organised by the New South Wales Ecumenical Council (NSWEC), the traditional "Ecumenical Prayer for Christian Unity" took place in the Greek Orthodox Cathedral in Redfern, and immediately following the prayer, a customary fundraising dinner was held in the adjacent hall.

His Eminence Archbishop Haigazoun Najarian was accompanied by Father Avetis Hambarzumyan, Vice-Chairman of the Diocesan Council Mr. and Mrs. Stepan and Hilda Kerkyasharian, Dr. Artin Jebejian a Friend of the Diocese and Member of the Theological Commission of the Ecumenical Council, Mr. Herman Mahmoud Parish Councillor of Holy Resurrection Church, Deacon Boghos Keleshian editor of the Looyce monthly Church publication, and Maro Sarkissian, a member of the Diocesan Ladies Guild. We note that the chairman of the organising committee of this initiative is Deacon Nishan Basmajian.

The event coincided with the 100th anniversary of the founding of the Australian Diocese of the Greek Orthodox Archdiocese. For reasons beyond his control, Archbishop Makarios could not participate in the activities. Bishop Iakovos officiated and preached at the spiritual ceremony. In general, the hymns of the evening liturgy (in Greek and English) were sung with the participation of more than 20 spiritual fathers and the choir of the church. His Eminence was one of the three clergy who read the ritual prayer. Representatives of many churches participated in the ceremony, which made the occasion a truly ecumenical affair.

At the invitation of Mandy Tibbey, the MC of the fundraising dinner, Bishop Iakovos gave an opening prayer and welcoming speech. The Hellenic Lyceum St Sophia Dance Group presented a series of Greek ethnographic dances, drawing applause from the audience. The keynote speaker was Very Reverend Christophoros Krikellis, the Chancellor, who was



responded by Most Rev Michael McKenna, Catholic Bishop of Bathurst. The Hon Mark Buttigieg MLC, NSW Parliamentary Secretary for Multiculturalism, also expressed his words of encouragement. This year in the



invitations to the event, it was requested that representatives of the Christian youth groups be present on behalf of their Churches. Two young people were given the opportunity to present the words of the Christian youth. They were Siosiana Joyce Tangi from the Uniting Church and Dionysios Bozikis from the Greek Orthodox Church. Very Reverend Father Anastasios Bozikis, President of NSWEC, gave the closing speech and prayer. It is worth noting that the Greek Orthodox Church covered all the expenses of the dinner which, due to the hard work of the organising committee, became an opportunity to raise more than

\$16,000 of funding to be directed towards the implementation of various Ecumenical programs. More than 150 attendees were very impressed by the event.

The Council expressed its gratitude to all the benefactors and donors of the gifts provided for the raffle, who were predominantly Armenians who greatly appreciate the work done in the cause of Ecumenism.

Monday 13 May – His Eminence participated in the meeting of the heads of the Churches of the Australasian Middle East Churches Conference AMEC, which took place in the Lidcombe Armenian Catholic Church, hosted by the Monsignor Parsegh Sousanian. The meeting addressed the situation of migrants from the Middle East and the legality of the work carried out for their benefit according to Australian laws. Reference was made to the security of the churches, especially considering the recent attack on the Assyrian Bishop Mary. The members also listened to the presentation of each church leader about the events that took place in their respective churches. The meeting discussed proposals to commemorate the 1700th anniversary of the Council of Nicaea, which will be celebrated next year.



Tuesday 14 May – Archbishop Najarian presided over the regular meeting of the Diocesan Council, the main agenda of which was the Diocesan General Assembly to be convened in Melbourne on May 18. The agenda, the annual reports of His Eminence and the Council and proposals to be made to the meeting were approved.

Saturday 18 May – At 9:30 a.m. in the adjacent hall of Melbourne's St. Mary's Church, the annual general meeting of the Diocesan Properties Committee was held under the chairmanship of Archbishop Najarian. Following this meeting, from 1.00 p.m. to 7.00 p.m., similarly under the chairmanship of His Eminence, the Diocesan Assembly was held, with the participation of 22 delegates from the four parishes of the Diocese, and six invited representatives of the youth associations and welfare centres. The following officers were elected for

the meeting - Chairman Mr. Zaven Yaghljian, Secretary (Armenian) Mr. Harout Okgian, Secretary (English) Mr. Karapet Vartanian. After the approval of the agenda, the message of His Holiness Catholicos Karekin II was read. The meeting ratified the minutes of the 2023 meeting, after which the reports of the annual activities of His Eminence and the Diocesan Council were presented and approved.

Dr. Zaven Panosian presented a summary report on the national-spiritual activities of Auckland's (NZ) Armenian community. The meeting considered questions from the parishes and solutions were proposed. Reports of Sydney and Melbourne Welfare Centres and youth associations were presented, which were appreciated by the participants of the meeting.

The meeting ratified the Diocese's 2023 Financial statements and approved the 2024 Budget. Further and was informed about the work that has been carried out and is continuing to arrange the ensuing Primate.

The meeting approved the report to the Resolution Committee and confirmed that next year's General Assembly will be held at the Holy Resurrection Church, Sydney, on 17 and 18 May 2025.

In his closing address Archbishop Najarian reflected on how two years ago, following the provisions of the canon of the Mother See, he resigned from his post at the age of 70. However, at the request of the Diocesan Council and the General Assembly and with his willingness, his tenure was extended for two years. The two-year term will end on December 31. Touching on this reality, His Eminence expressed his unreserved gratitude to all the members of the community, for their respect and solidarity and unconditional cooperation.

The meeting was closed with the prayer of His Eminence.



Sunday 19 May – His Eminence presided over the Holy Mass held in St Mary's Church, which was attended by Reverend Fathers Avetis Hambardzumyan and Father Muiron Avedisian, as well as the delegates of the Diocesan General Assembly and members of the Properties Committee. Reverend Father Khacher Harutyunyan was the celebrant and following the Liturgy, His Eminence blessed a bell donated by a pious believer, which will be fixed in the church.



